№ 171 ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 9

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի. առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊԵԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ **1906** ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 ռուբլի։ Յուլիսի 1-ից մինչև 1 հոկտեմբերի 2 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բաքուայում և Բարսնայում փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Բազում բաժանորդներին լրագիր հասցնելը խմբագրութեան տուած հասցէներով վերցրել է իր վրա Թադէոս Բունիաթեան (գրավաճառանոց, հայոց եկեղեցուն կից), ուստի լրագրի համարների ուշ կամ անկանոն ստացվելու դէպքում բազում բաժանորդները պէտք է դիմեն նրան։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով։ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“ իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Հասցէն փոխելու համար պէտք է վճարել 40 կոպէկ։

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱԳԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԱՐԵԱՆ ՉԱՑՆԵՐ

գրքի հրատարակիչ Ստեփան Մէլիք-Սողոմոնեանցը յայտնում է դիտութիւն հասարակութեան, որ «Արեան Զայների» 101-րդ և-րեսի վերջին տողում սպրդել է մի խոշոր սխալ. փոխանակ «բուրբասեր բուլանդցիք», պէտք է լինի «հայրենասեր բուլանդցիք»։ Հրատարակիչը խնդրում է գրավաճառներին և գնող անձերին, որ յիշեալ սխալը ուղղելու համար անմիջապէս կարեն գրքի 101-րդ թերթը։

առ. 4—5

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ

Խնդրում է Թիֆլիս քաղաքի բոլոր տանտէրերին իր ժամանակին, այսինքն իւրաքանչիւր ամսի վերջին վճարել դռնապաններին հասանելիք ռոճիկը, որովհետև վարչութեան տեղեկութիւններից երևում է, որ կան տանտէրեր, որոնք չեն վճարել դռնապանների մի քանի ամսվայ ռոճիկը։ Վարչութիւնը յոյս ունի, որ տանտէրերը այժմ և ետ կը վճարեն դռնապաններին հասանելիք ռոճիկը և դրանով վերջ կը դնեն նրանց արդարացի բողոքներին և կաղատեն ոստիկանութեան ու դատարանին դիմելու անհրաժեշտութիւնից։ 1—1

ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ուսումնասիրութեան կազմակերպութիւնը. Վերջին տեղեկութիւններ. Մամուլ. Դանձակի շրջանում. Առաջիկայ Դումայի համար. Պարսկասանի սահմանադրութիւնը. Պարսկական սահմանադրութեան ուրիթով. Մոռացված անկիւններ. Եւրոպական մամուլը Պետական Դումայի մասին. Նամակ Նոր-Բայազետից. Նամակներ Աստրախանից. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր. Նամակ Ֆրանսիայից. Թուրքիի հոգաբարձութեան ընտրութիւնները Արտաքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

I

«Մշակ»-ի № 163-ում լոյս տեսած մեր առաջնորդող յօդուածում մենք, մասնացոյց լինելով հողային խնդիրների կարևորութեան վրա, առաջարկեցինք հոգ տանել նրանց խոր և ընդարձակ ուսումնասիրութեան մասին։

Մենք ասացինք, որ այդպիսի ուսումնասիրութիւններ չեն կարող անել մասնաւոր անձեր, և յամենայն դէպս դժուար է յոյս դնել կամաւորների վրա, որոնք կարող են երևան գալ կամ չը գալ։ Պէտք է գործին դնել ամենեն մի որևէ հիմնարկութիւն, մի որևէ կազմակերպութիւն, կամ մի քանի հասատութիւններ միասին։

Ասելով այդ, մենք, իրագործութեան ուղիներից մէկը ցոյց տալու նպատակով, իբրև օրինակ, յայտնեցինք, որ կարող էր մի այդպիսի ուսումնասիրութեան նախաձեռնութիւն վերցնել իր վրա կովկասեան գիւղատնտեսական ընկերութիւնը, գործակցութեան հրաւիրելով զանազան հասատութիւններ, ընկերութիւններ և նոյնիսկ քաղաքական կուսակցութիւնների բիւրօներ։

II

Կը վերցնէ արդեօք իր վրա այդ գործի կատարումը կովկասեան գիւղատնտեսական ընկերութիւնը, թէ մի ուրիշ հասատութիւն, կամ մի քանի հիմնարկութիւններ միասին, թէ քաղաքական կուսակցութիւնների բիւրօները, թէ մի ուրիշ նոր կազմակերպութիւն, այդ այսօր նախատեսել անկարելի է, բայց գործը կարևոր է ու հերթական և մենք պէտք է ամեն ջանք գործ դնենք, որ նա ընթացք ստանայ մերձակայ ապագայում։

Մինչև այժմ կատարված կովկասեան ուսումնասիրութիւնների մէջ կան բազմաթիւ գնահատելի նիւթեր և լուսաբանութիւններ, բայց ամբողջ գործը իր բոլոր ամփոփով չէ ներկայացված այն կատարելութեամբ, որպէսզի անհրաժեշտ է թէ գիտնական ընդհանուր եզրակացութիւններ դուրս բերելու և թէ գործնական ցուցումներ մշակելու համար։

Մենք անկարող եղանք նոյնիսկ պատճառաբանված ձեռակերպութիւններ ներկայացնել՝ Պետական Դումային առաջարկելու՝ մեր երկրի բոլոր մասերի վերաբերութեամբ։

Այո, գործ կայ կատարելու և այն էլ կարևոր, հերթական գործ։

III

«Մշակի» այսօրվայ համարում մենք զետեղում ենք Ս. Բահաթրեանի մի նամակը, որ նա գրել է մեր առաջարկութեան վերաբերութեամբ։ Նա ընդգծում է մասնաւոր մարդկանց կատարելիք օգտաւէտ դերը և ցանկանում է, որ նրանք օժանդակված լինէին հասատութիւնների և հիմնարկութիւնների կողմից։

Ի՞նչ կարելի է առարկել մի այդպիսի ցանկութեան դէմ։ Ոչինչ։ Ազատ մասնաւոր աշխատաւորները կարող են գեղեցիկ գործեր կատարել հաւաքական ոյժով։ Բայց պէտք է կազմել այդ հաւաքական ոյժը, պէտք է մարդկանց համախմբել, պէտք է գործունէութեան ծրագիր մշակել, մի խօսքով հանդէս բերել մի կազմակերպութիւն։

Իսկ մեր ասածն ինչ է։

Մենք էլ այդ կազմակերպութեան անհրաժեշտութեան մասին ենք խօսում։

Մենք մասնաւորելով հարցը՝ առաջարկում էինք, որ նախաձեռնութիւնը վերցնէ իր վրա գիւղատնտեսական ընկերութիւնը։ Եթէ պ. Բահաթրեանը առաջարկում է նաև փորձել ուրիշ եղանակներ, փորձենք և այն։

IV

Սակայն մեզ համար անհասկանալի է Ս. Բահաթրեանի դատողութեան ընթացքը։ Նա ի միջի այլոց ասում է հետևեալը.

«Եւ վերջապէս հիմնարկութիւնները և հասատութիւնները միջնորդների և շահագործողների դեր են կատարում միայն։ Նոյն մասնաւոր անձերի ձեռքով է գործը տեսնվում, աշխատութիւնը անվում։

Էլ ինչու էք արտաւորում մասնաւոր անձերի գործունէութիւնը»։

Ի՞նչ շահագործութեան մասին է խօսքը, մենք չը գիտենք։ Ի՞նչ շահագործութիւններ են արել բժշկան, աշխարհագրական, գիւղատնտեսական ընկերութիւնները կամ մի այլ գիտնական հասատութիւն, մեզ համար բոլորովին մութ է։ Եթէ կան գաղտնիքներ, պէտք է բանալ։

Աւելի ևս օտարոտի է մասնաւոր գործի արատաւորման խօսքը։ Մենք ինքներս մասնաւոր աշխատողների և հետազօտողների թուումն ենք։ Եւ ի՞նչ արատաւորման հարց կարող է լինել այստեղ։

Եթէ իսկապէս դրական ծրագիր կայ առաջարկելու—հանդէս եկէք։ Այնն մի մտածված և լուրջ առաջարկութիւն կարող է նպաստել գործի աջողութեանը։

Ա. Բալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Հին-Նախիջևան, 1 օգոստոսի

Հազիւ հազ մի քանի ամիսներ հանգըստացել էինք և մտածում էինք միջոցներ ձեռք առնել մեր քայքայված տնտեսութիւնը վերականգնելու և խոպանացած դաշտերը մշակելու, և ահա մեր գաղտ հարևանները ցանկանում են խախտել ընդհանուր խաղաղութիւնը։ Ահա ամիսներ է, ինչ Ղարաբաղ տանող Բիչանակի ճակապարհը փակ է և լեռնային մասի հայերը կտրված են քաղաքից։ Թէև հայերը միշտ խոյս են տալիս, որ ոչ մի դէպք չը պատահի, բայց և այնպէս այս մօտիկ օրերում քիւրտերը Նորսի դաշտերից գողացան նորսեցի Աւետիս Կարապետեանին. հասած ահեղագործութիւնները նայելով՝ անպատմելի տանջանքներով սպանել են և մինչև այսօր էլ դիակը յետ չեն դարձրել. թող սա էլ գա իր համագիւղացի՝ եօթը հայ գերիների մօտ, որոնք դեռ մնում են կեչլիում անուշադրութեան մատնված։ Մենք զոհում ենք այդ մէկին էլ ընդհանուր գաւառի խաղաղութեանը և չենք պատասխանում, թող տեսնենք քիւրտացի Կարա-բէգը դրանով կը բաւականանայ և թոյլ կը տայ իր սերնդագործութիւնները. ի հարկէ ոչ. Նրան կառավարութիւնը քաջալերութիւն է ներշնչել, և նա գործում է աւելի քաջալերված, որովհետև այդ հերոսը 1905 թ. մայիսեան ողէտալի օրերում Շահապունեաց ձորի հինգ հայ գիւղերը, այն է Ղարաբաբա, Արինջ, Նորս, Նորս-Մաղրա և Գիժաձոր, ամբողջովին աւերելուց և մեծ կոտորածներ անելուց յետոյ, իբրև վարձատրութիւն իր այդ մեծ քաջագործութեան, ստացաւ տանուտէրական լանջանշան և նշանակվեց տանուտէր, հանրակ ժողովրդի կամքի, և նոյն եռանդով էլ գործել է մինչև այսօր։

Վերջին ժամանակներս Զանգեզուրից և Շուշուց մեծ թւով թուրքեր են փախել անցել Նախիջևանի գաւառի լեռնային մասերը, և երկիւղ կայ այստեղ էլ կրկնելու. բայց յոյսով ենք, որ շնորհիւ գաւառապետ պ. Դուդուկովի ձեռք առաջ խիստ միջոցների, թուրքերը անկարող կը լինեն կոտորած անելու, նամանաւանդ Գողթան գաւառի (Օրդուբաթի մաս) բանխմաց և ազդեցիկ թուրքերը, որոնցից յայտնի են ստուպեցի Հաջի-Շաֆին, Վանանդի և Ազայի տանուտէրերը և այլն, չեն դադարի եղբայրասիրութեան իրանց յորդորներով քարոզներով ազդել իրանց հատատակիցների վրա և երկիրը խաղաղութեան մէջ պահել, ինչպէս մինչև այժմ պահել են. շնորհիւ դրանց, ամբողջ երևանեան նահանգում համարեա թէ միակ թուրքաշատ Գողթան գաւառն է, որ ազատ է մնացել եղբայրասպան արիւնալի տեսարաններից։ Ցանկալի է, որ այդպիսիները շատանան և օրինակել իգառնան իրանց բռնած ընթացքով, որով միայն ազգաբնակութիւնը կարող է խաղաղվել և իր տնտեսական քայքայված դրութիւնը բարւոքել հակառակ դէպքում այսպէս լարված երկար շարունակել չեն կարող, որովհետև աւելի զօրեղ թշնամիները՝ ռուսը ու սատանայինքը մօտիկ ապագայում համարեա թէ հաւասարապէս սպառնում են հայ և թուրք տարրին. հետևապէս ընդհանրութեան շահը պահանջում է մոռացութեան տալ մինչև այժմ կատարված բոլոր դէպքերը՝ թողնելով արարքատուութեան ատեանին, եթէ գոյութիւն կունենայ, իսկ իրանք իրանց գոյութիւնը պաշտպանելու համար միահամուռ ոյժով կուրծքները դէմ տուած կուեն առաջիկայ ահեղ սովի և սատանայինքի դէմ։

Շնորհ

Արիւնահեղ կռիւները Սիսիանում

Յուլիսի մէկից Սիսիանի թուրք գիւղերի բնակիչները ինչ որ պատրաստութիւններ էին տեսնում. լուրեր էին պըտրտում, թէ Ղարաբաղից, Ղափանից, Մաղաւուզից շատ թուրքեր են եկել, քօչուորների ու տեղացիների հետ միանալու և յարձակում պիտի գործեն հայ գիւղերի վրա։

Հայերը լուրջ կերպով պատրաստվում էին դիմադրելու այդ անկոչ հիւրերին։ Յուլիսի 2-ին Իլդրիմ-բէգը, իր որդի Շամիրի հետ, 200 ձիաւորով գալիս է Շաքի թուրք գիւղը և կազմակերպում է մի քանի հարիւրակ խմբեր, Շաքիի իւզբաշու և մի քանի բէգերի ղեկավարութեամբ, քօչուորներից ու տեղացի գիւղերից միացած, Վաղուդի, Կղզլջղ, Շաքի, Շուքար, Վերդի, Փալ, Արիւքլու գիւղերից։ Իսկ քօչուորների մէջ Ավդուլ-բէկզօլների օթաներում պատրաստվում էին միւս խմբերը, յայտնի աւազակապետ Մուրթուզի և Սիբիրից փախած Աբիւլ-բէգի, Մանաֆի և միւս բէգերի ղեկավարութեամբ։ Միանուագ յարձակվում են մի քանի գիւղերի վրա։ Մաղրայի նախերի վրա են յարձակվում, բայց գլխիկոր յետ փախչում, ժաղրեցի կտրիճների ձեռքի չուրը խմելով։ Բնաւնիս, Թաղալիւղ, Ալիլու նոյնպէս յետ մղվեցին։ Այդ անպտղութիւնից զրգռված թուրքը բէգերը, հաւաքեցին իրանց ոյժը և խառնիճաղանջ բազմութեամբ յարձակվեցին 50—60 տուն ունեցող Ղալաջուղի վրա, որ հիմնայատակ անեն։ Թուրքերի խորհուրդը իմանալով Բազարչայի մօլլայանները իմաց են տալիս Ղալաջուղցոց։ Վերջիններս յայտնում են սուրհանդակով մօտիկ հայ գիւղերին՝ Անգեղակոթ, Շաղաթ, Մագրան, Բալաք և միւս գիւղերին։ Իսկոյն օգնութեան են հասնում կարճ երիտասարդների խմբերը, այն ժամանակ, երբ թշնամին մտնում էր գիւղ։ Թշնամին ընկնում է երկու կրակի մէջտեղ, լաւ ջարդ ուտելով յետ է փախչում, շատ զոհերով. հայերը ազատում են գիւղի բնակիչներին և ապրանքը մի կողմից, իսկ միւս կողմից կռիւ տալիս. թուրքերը փախչում են մերոնք հալածում՝ մինչև «Աժդահա-դարայի» վերի սարը. թշնամու մի մասը թաքնված է լինում «Աժդ.հա-դարայի» ձորում, (մերոնք այդ չեն նկատում) որտեղից դուրս գալով և մերոնց շրջապատելով՝ սկսում է տաք կռիւ, որը տևում է 3 ժամ։ Այդ ժամանակ Ղարաքիլիսայի օգնականները հասնում են օգնութեան. և փամփուշտ տալիս մերոնց, (սրանց փամփուշտը համարեա թէ վերջացած էր) և աւելի մեծ ջարդ ստանալով թուրքերը՝ փախչում են, թողնելով շատ դիակներ՝ 50—60 ժամաւորապէս։ Մեր կողմից եղան 17 զոհ և վիրաւոր. դիակները բերված են. պատանի Ստեփանի մահը շատ խորը խոցեց մեր սրտերը. պատանին 17 տարեկան էր, սովորում էր Բագուում. միւսները—Սահակ 23 տ., Մանուէլը, Վարդան, Յարութիւն, Սրգօ, Մկիչ, Խաչօ, Զամչեան, և ուրիշներ։

Ղալաջուղը բոլորովին այրված է, ընտանիքները գիւղերում բաժանված։ Գընալը տասնեակ հազարների է հասնում։ Անհրաժեշտ է շուտափոյթ օգնութիւն հասցնել։

Թուրք գիւղացիները փախչում են սարերը, քօչուորների մօտ։ Դրութիւնը շատ վատ է. թուրքերը սպասում են նոր ոյժերի Արաքսից։

Արդէն հունձի ժամանակը մօտենում է, բայց ինչպէս դաշտ դուրս գայ գիւղացին հունձ անելու, քանի որ սարից մօսինի գնդակը վզվզալով գալիս է դէպ իրան։ Սոսկալի է...

Ամբողջ գաւառում հաց չը կայ. հացկերը լաւ չեն. այս տարի սով է սպասվում Սիսիանում, մանաւանդ շատ մարդիկ չեն վարել, ցանել։ Ցորենը շատ սակաւ է. ունեցողն էլ շատ թանդ է ծախում. պուդը 1 ր. 60 կ.—1 ր. 70 կ., գարին 1 ր. ապրանքը նոյնպէս շատ թանդ է։ «Ա՛խ Աստուած-ջան, քեզ մատաղ, ճար արա եթիմներիս, քաղցած են ախր»,—մրմնջում է գիւղացին առ Աստուած։

Թաթուլ

ՄԱՄՈՒԼ

Ինչպէս երևում է, Օրմանեան պատրիարքի հրաժարականը ստիպել է սուլթանին մի քանի դիւցազներ անել և վերադարձնել Սսի կաթուղիկոսարանին գրաւած հողը։ Ահա ինչ ենք կարդում «Արմենիա» լրագրի մէջ.

Կ. Պոլսի Պատրիարք ամեն. Օրմանեանի հրաժարականը չէ ընդունուեր Սուլթանէն, բերանացի խոստացուելով որ իր խնդիրքներէ գէթ մի քանին նկատի առնուելով պիտի գործադրուին։ Պատրիարքը գրաւոր պահանջեր է եղեր այդ խոստումներ։ Կիլիկիայի կաթողիկոսական աթոռին պատկանող Թլանի ընդարձակ ագարակը, որ յարքունիս գրաւուած էր և մինչև իսկ կը ըսուէր թէ Ռուսաստանէն գաղթած չէրքէզներ պիտի տեղաւորուին անոր հողերի վրայ, վերադարձուեր է ազգին։ Այս թանի ազարակի խնդիրը խաղալիկ մը դարձած է Սուլթանին ձեռքը. մելթ կը յափշտակէ հայ ազգի ձեռքէն և մերթ վերադարձնելով շնորհք մ'ըրած կը համարուի։ «Բիւզանդիոն» օրաթերթի խմբագիր տիար Բիւզանդ Բէյեան, «Տասա» շաբաթաթերթի խմբագիր տիար Տիգրան Արփիարեան և այլ մի քանի անձեր, որոնք բոլորովին անտեղի կապաններով ձերբակալուած էին, Պատրիարքի գանգատին վրայ արձակուեր են անմիջապէս։ Բայց այդ արձակումներ պարզապէս ձեռնածութեան պէս բաներ են։ տեղ մը մէկը կը արձակեն, ուրիշ տեղ մը ուրիշը կը ձերբակալեն, այնպէս որ գանգատ նիւթ եղող անհիմ և անտեղի ձերբակալութիւնները կը շարունակուին և սասակցած են մանաւանդ այս միջոցին։ Իսկ Օրմանեանի հրաժարական խնդիրը մնացած է առայժմ անորոշ վիճակի մը մէջ։ Սուլթանը կը մերժէ, Օրմանեան կառարկէ։

«Անգղիա բացորոշապէս նուիրուած է ռնտեսապիտութեան, Գերմանիա՝ մտաւորական մեծագործութիւններու, և Ֆրանսա՝ կեանքի ընկերական փուփրուն։

*

Բօսոնում հրատարակվող «Armenia» անդլիական հանդէսի յուլիսի համարում տպված է «Gournal of Education» թերթի խմբագիր դօքտօր Վինչիպի «Հայաստան և Ամերիկա» վերնագրով մի գեղեցիկ յօդուածը, որը առաջ ենք բերում «Ձայն Հայրենեաց» լրագրի թարգմանութեամբ.

Անգղիա երկու հարիւր տարիներէ իվեր ժողված է ամեն արժէքաւոր բան, որ ասդին, անդին ինկած կը մնար, և ամեն գաղթավայրի նպաստել տուած է իր յաջողութեան և իր սրուեստական ու վաճառականական մեծութեան։

Գերմանիա վերջին հարիւր տարիներու մէջ շատ աւելի հրաշալիքներ արտադրած է գիտութեան, արհեստի, գրականութեան, երաժշտութեան, ընագիտութեան և բժշկութեան մէջ քան ուրէ ազգ, սակայն յաջողութիւն ունեցած չէը, ուէ մեծագործութեան կամ ծաւալումի մէջ, որ պարկեշտ, մտաւորական հիմերու վրա չէ հաստատուած։

Ֆրանսա ամենէն աւելի ծառայած է իր ժողովուրդին, կամ լաւ ևս է ըսել՝ իր ամբողջ ժողովուրդը մարդած է ստանալու ամենէն շատ հաճոյք և երջանկութիւն աշխարհի վրա գտնուող ուէ ժողովուրդի աւելնկն պղտիկ ճիպէն։

Ամերիկա քիչ ունի անգղիական տնտեսագէտ ճարտարամտութենէն, գերմանական իմացական նրբամտութենէն, կամ Ֆրանսայի ընկերական ներդաշնակութենէն։ Ի՞նչ ըլլար է ուրեմն իր ազգան, կամ ազգաց մը ունենալու չէ։

Ես մարգարէ մը չեմ, ոչ ալ մարգարէի մը զաւակը, բայց սոսկ Եանքի մը, և, այսպէս, իրաւունք ունիմ կարծելու, իրաւունք ունիմ օգտակար Եանքի կարծիք մը յայտնելու, որ է՝ թէ Ամերիկա մարդկութեան խնդիրը պարտի լուծել։

1620-էն մինչև 1898, գործնականապէս երեք դար, Ամերիկա ապաստանարանը եղած է աշխարհի վշտաբեկներուն և ռնտանկոխներուն։ Ուէ մարդ ուէ կողմէ կըընար հոս գալ և սիրով ընդունուիլ։ Քօսութ և Գարիբալդի, Իրլանդիայի լրտեսը, Ռուսիոյ հարստահարուածը, Իտալիայի սովամահը, Հայաստանի կեղեքեալը կընային գալ հոս և ազատութիւն ու հարստութիւն գտնել, և այսօր մեր մէջ հարուստ և ազդեցիկ մարդեր կը գտնուին աշխարհի քաղաքակիրթ ազգերու չարչրկուած ժողովուրդներէն։

Տասնեակէ մը իվեր Ամերիկա ջանացեր է ուրիշ երկիրներու ծանրութիւնները վերցնելու, վերքերը մեղմելու և թուլախիտները ներշնչելու։ Ազիկա Սպանիոյ ձեռքը կեցուց Քուբայի մէջ, դարձեցուց Ծայրագոյն Արևելքի անդութ պատերազմը և Մէջերկրական արևելեան եզերքներու վրա պատերազմը արգելից։

Հիմա Հայաստան կը կարօտի անոր ազդեցութեան, կը կարօտի անոր համակրութեան, անոր խորհուրդին և անոր հզօր աջ բազուկին։ Ու Ամերիկա կը կարօտի կորսվաղնդումին այնպիսի գործի մը, որուն կը հրաւիրէ զինք Հայաստան։

Վաղուն ջուրը միշտ մաքուր է և յստակ, անշարժ ջուրը կը լճանայ և մահաբոյր ու նեխած կը դառնայ։ Նոյն իսկ բարոյական նպատակ մը, ամենէն բարձր բարոյական նպատակը, առանց գործունէութեան պիտի լճանայ։ Գործունէութիւնը ուրիշ ոչ մէկ տեղ աւելի անհրաժեշտ է քան առաքինութիւնների պարագային։ Պարծենկոտ հրապարտութեամբ պաշտել այն բարի գործերը, որոնք արդէն կատարուած են, կառաջնորդէ ունայնամտութեան, որ՝ քաղդեկեի հանգոյն՝ ազգային կեանքի նեարդներուն մէջ կը սողոսկի։

Ամերիկա գործ մը ունի Հայաստանի մէջ, Հայաստան պատգամ մը ունի Ամերիկայի համար։

*

Երևանից ահա ինչ են գրում «Աշխատանք» թերթին (№ 28)։

Դաշնակցական և Հնչակեան երկու փակեան կուսակցութիւնները իրար հետ չափուեցին վերջապէս այստեղ ևս։ Թէ ինչ պատճառներից, այդ մասին դուցէ միւս անգամին, բայց իրողութիւնն այն է, որ հնչակեանների ձեռքով սպանուեց Արարատեան երկու դաշնակցական զինուոր։ Այդ բանից ամբողջ Արարատը դարձաւ «սօցիալիստ» դաշնակցականների արշաւանքի ասպարէզ։ Ամբողջ գիւղերում սարսափ պատեց, երբ այդ «ազնուական» յեղափոխականների կողմից պաշարուեցին մի քանի գիւղեր, Տամշլուն, Եղվարդ և դեռ մանրամասնութիւնը պարզուած չէ թէ քանի գիւղեր։ Անցեալ գիշեր կատաղի հրացանաձգութիւն է պատահել նրանց միջև Եղվարդի սահմանում. կան ծանր կերպով վիրաւորներ ու ջարդուածներ։ Լուրեր են գալիս, որ Հնչակեան կուսակցութիւնը պատկանող գիւղերը ենթարկուում են նրանց կողմից (դաշն.) սարսափելի բռնութիւնների, որոնց տիպում է դառնալ դաշնակցական։ Ցաւալի է, որ այդ երկու պարտիաները իրենց միլիտարիզմի ուժով սարկացրած պահում են գիւղական ժողովրդին և նոյն իսկ իրար ձեռքից համայնքներ ու մարդիկ խլում։ Եղել են գիւղերում սպանուողներ, վիրաւորներ, ուր կանայք ու երիխաներ են սրատաճաք եղել։

Սա ի՞նչ պատուհաս է, և ո՞րպիսի խայտառակութիւն այն մարդկանց հասցէին, որոնք իրենց վրա յեղափոխական անուն են կրում։ Որքան կը պարտաւորացնէին նրանք ժողովրդին, եթէ յետ անէին նրանց վրին ուժով փաթաթած այդ անկոչ «ազգասիրութիւնը». Բաւական չէ՞ միթէ որքան տանջողներ կան առանց այն էլ թշուառ դիւցազուն։

Ժամանակ է, որ միջոցներ ձեռք առնվեն այդ եղբայրասպան զզուելի կռիւներին վերջ դնելու։

*

Նրբաճաշակ և բազմաթիւ լուրջ գիտական ուսումնասիրութիւններ հրատարակած է Գելցեր հին ու միջին դարերու Արևելքին վրայ։ Բիւզանդական պատմութեան ամենէն հմուտ ներկայացուցիչներէն էր ան և իր «Բիւզանդական կայսրութեան համառօտ պատմութիւնը» տեսակին մէջ անման գործ մ'է, որուն հայերէն թարգմանութիւնը հրատարակուեցաւ ասկէ առաջ։ Իր հին յոյն ենայի համալսարանի հայագէտ պրոֆէսսոր Գելցերի մասին մասին, բացի այն տեղեկութիւններից, որ մենք արդէն հաղորդեցինք, քաղում ենք և հետևեալը Կ. Պոլսի «Բիւզանդեան թերթից.»

մեծ ժամանակագիրներու մասին հրատարակած ուսումնասիրութիւնը մինչև օրս ալ ամենէն կարևոր և կատարեալ գործ կմնայ։ Ի վերին աստիճանի շահեկան ձևով կպատկերացնէ անոնց աղբիւրներն և ինքնուրոյն հատուածներն և կպարզէ անոնց ժամանակագրական հաշիւներն ու դրութիւնները։ Հայնրիխ Գելցեր կպատկերի այն սակաւաթիւ եւրոպական մեծ գիտնականներու շարքին, որոնք մասնաւորապէս զբաղած են նաև հեթանոսական կրօնով և եկեղեցական պատմութեամբ։ Բազմաթիւ և բազմատեսակ են Գելցերի աշխատութիւնները, որոնց ամբողջութիւնը ներկայացնել չէ հարկաւ մեր այս ներկայ յօդուածին նպատակը։ Ո՞ւրքան հետաքրքրական է, օրինակի համար, անոր վերջին տարիներս հրատարակած «Բիւզանդական թեմերուն կազմակերպութիւնը» գիրքը, որ հայերէնի վերածուեցաւ։ Այս կարևոր գիտական աշխատութեան շնորհիւ էր որ Գելցեր բազմաթիւ գիտական ընկերութեանց և կաճառներու անդամ ընտրուեցաւ և ամէն ուրեք յարգանքով կողմնակեին անոր խօսքերն ու միտքերը։ Սրբազան Պատրարքին եկած մահագիր մը կը գուժէր բեղմնաւոր գիտնականին մահը, որ քանիցս Պոլիս այցելած միջոցին ծանօթացեր էր անոր հետ և կիսանար անոր բազմապիսի ընդունակութեան և կարողութեանց վրայ։ Գելցերի Հայ Եկեղեցւոյ սկզբնաւորութեանց մասին արտայայտած քանի մը կարծիքներու մասին մենք խօսած ենք մեր ուսումնասիրութիւններէն մէկուն մէջ, «Ծագումն հայ վանականութեան» զոր քաղուածօրէն ծանօթացուց Ժառանգաւոր («Լոյս» 1905. թիւ 19 և 22.)։

*

Բողոքականութեան կատարած դերը հայ ազգի կեանքի մէջ դեռ լաւ պարզաբանված չէ։ Սակայն անտերքելի է այն իրողութիւնը, որ բողոքականութիւնը Թիւրքիայի հայ ժողովրդի մտաւոր զարգացման գործում մեծ դեր է կատարել և ազգային գիտակցութեան զարթօնքին մեծապէս նպաստել։ Դժբախտաբար, հայ բողոքական քարոզիչները, գաղթելով իրանց հօտի հետ Թիւրքիայից Ամերիկա, սկսել են մեղկանալ և չը կատարել այլ ևս իրանց նախկին օգտակար դերը։

Ահա ինչ ենք կարդում այդ մասին «Ձայն Հայրենեաց» թերթի մէջ.

Բողոքականութիւնը ներկայ ժամանակիս կրօնական դրութեանց մէջ ամենէն զարգացեալը և up to date-ն է։ Ո՛չ թէ միայն այսպէս համոզուած եմ, այլ նաև համոզուած համաձայն կենք մ'ալ ապրելու ջանացած եմ։ Թէև եղած են հայեր անցեալին մէջ և տակաւին կան ներկայիս մէջ, որոնք բողոքականութեան մեր մէջ երևումը ազգային չարիք մը նկատեցին, սակայն անկեղծ և աննախապաշար մտքով դիտողի մը առջև բողոքականութեան մեր մէջ երևումը բարիք մըն է յաւէտ։

Անուրանալի է թէ բողոքականութիւնը մեծ ծառայութիւն ըրաւ ազգին իր դպրոցներովը և քարոզիչներովը և տակաւին կընէ երկրին մէջ։ Ունէինք պատուական քարոզիչներ, որոնք ոչ թէ միայն սիրուած էին իրենց հօտէն, այլ և ազգային երկասարգութիւնը կը գուրգուրար անոնց վրայ։ Մենք ամենքս կը յիշենք ատենները, երբ մեր ժողովարանները նեղ կացային։ Գիտանք թէ բողոքականները, մանաւանդ գաւառներուն մէջ, ազգին ամենէն զարգացեալ մասը կը կազմէինք և ասով ազգային շրջանակներու մէջ տեղի ունեցող ամեն բարենպաստակ շարժումներու մէջ եթէ ոչ առաջնորդողներ, գէթ կարևոր ուժ մը կը սեպուէինք։

Սակայն հոս, Ամերիկայի մէջ, ցաւալի է ըսել, մեր առաջնորդողի դերը կորսնցուցած ենք։ Կորսնցուցած ենք այն գործունեայ, ձեռնհարեց ոգին զոր ունէինք երկրին մէջ։ Այս երկիրը գալէս առաջ կը խորհէի թէ, երկրին մէջ մեր ունեցած դիրքէն գատելով, այս երկրի հայ բողոքականները շատ աւելի գործունեայ, անձնուրաց և ազգասէր ոգով տոգորուած՝ կառաջնորդեն, կը գրգռակցին այս տարագիր ժողովուրդին։ Բայց ով յուսախաբուեցանս, հայ բողոքականութիւնը բողոքական Ամերիկայի մէջ իր բարձր դիրքէն ինկած գտայ։ Հոս որ շատ աւելի ապարէզ և միջոց ունէինք մեր շուրջ հաւաքելու տարագիր երիտասարդները օգնելու անոնց, գործակցելու անոնց ազգասէր ամեն ձիգերուն մէջ։ Պատճառը։ Պատճառը շատ պարզ է, որովհետև մեր քարոզիչները հոս, ազատութեան այս երկրին մէջ, օտարանալու հակամիտեցան, ամերիկացի ըլլալու փափաքը շատ սիրուն երևցաւ իրենց, ասով հետզհետէ սպանեցին իրենց մէջ եղող ամեն ազգային զգացում և եղան անունով հայ, սրտով ամերիկացիներ։ Ա՜խ, սա մեր քարոզիչները, որոնք տառապանքի երկրին մէջ ապրած են, տեսած են Թրքական բարբարոսութիւնը և գուցէ նոյնիսկ իրենց անձերուն վրայ կրած են զայն, եթէ միայն կամք ունենային ազգային երիտասարդութիւնը իրենց շուրջը հաւաքել։ Բայց չըրին, ազգին մէջ չի մնան, կղզիացած ապրեցան, մերժեցին այն հրաւէրները՝ որ իրենց կըլլար երիտասարդութեան կողմէն խօսելու և իրենց ժողովուրդին մէջ։ Մերժեցին շաբաթական քարոզ մը խօսելէ զատ ուրիշ ոչ և է բան ընել, ծոյլ եղան բարեն բացարձակ նշանակութեամբը։ Ե

ԳԱՆՁԱԿԻ ՇՐՋԱՆՈՒՄ

—

Օգոստոսի 5-ին

Մի կողմը թողած Բաղաձորը, Սարովը, Խոյլարը, Ղարադաղլուն, որոնք իրանց բոլոր կայք կարողութիւնը՝ շէն գիւղեր զոհ են տուել թուրքական բարբարոսութեանը, ներկայումս միացել են նրանց արտերն ու խոտերը։ Մուկն ու կարկուտ, անընդհատ անձրևները փչացնելով լրացրին պակասորդները։

Մի կողմը թողած այս չարաբաղդ գիւղացիներին, վերցնենք Գանձակի շրջակայ մեծ և փոքր գիւղերը, որոնց վասել են բնութեան պատահարները։ Որ գիւղն ուզում էք վերցրէք՝ անասելի զրկանքներ են կրել, հրաշից, կարկուտից, մկնից։ Նուազար գիւղը, որ ամենահացառատ գիւղն է հաշուում մեր նահանգում, որի գիւղացիները առատ տարիներում իրանք են եղել շրջակայ գիւղերին հաց տալուց։ որ ներկայումս նրանք իրանց գանգատներով գիժումներ են անում գանձակեցիներին, որ միջոցներ ձեռք առնեն իրանց համար ձեռնտու պայմաններով հաց ձեռք բերելու։ Նուազարեցոց արտերը թէև կարկտահար չէ եղել, բայց հէնց որ հասել է հունձը, լոյս են ընկել անթիւ մկներ ու արտերը հնձել, գիւղացիք մացել են շուարված մկների հունձի մասին։

Սառը և էժան ալիւրները Ռուսաստանից բերած թէև ձեռնտու են, բայց շուտով դառնում են—անհնար դանուում գործադրել։

Իսկ բարձր տեսակի ալիւրները թէև չեն աղում, սակայն գները մատչելի չեն հասարակութեան մեծամասնութեան համար։ Միակ հնտաու հացահատիկը Ռուսաստանից բերած ցորենը կը լինէր, եթէ կառավարութիւնը բարեհաճէր կարգադրելու վերոյիշեալ պասած գիւղերի համար առնուազը մի հարիւր վագոն, և երկաթուղու վարչութիւնը այդ բարիքն անի, ինչպէս արաւ Ռուսաստանում սով եղած ժամանակ, երբ Կովկասից էր հաց արտահանում ֆՌուսաստան —մեծ բարիք արած կը լինի։

Բացան, Խոյլար, Ղարադաղլու, Սարովը առանց կառավարութեան նպաստների գոյութիւն ունենալ չեն կարող, իսկ միւս գիւղերի համար անհրաժեշտ է ձեռք բերել ձրի վագոններ Ռուսաստանից հաց հասցնելու համար։

Որքան մենք կարողացանք իմանալ, գիւղումները կարող են անել գիւղացիք իրանց համախմբականներով, որը պէտք է ներկայացնեն նահանգապետին։

Նոյն բանակցութիւնները կարող են կատարել Նպաստամատոյց Յանձնաժողովները, Ազգասանում Մանաժողովները և գիւղական համայնքները նահանգապետների միջոցով։

Հրաւիրում ենք ձեռնտա անձանց ուշադրութիւնը այս հանգամանքի վրա քանի որ ուշ չէ։

Աւետիք Սահակեան

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

—

Հին-Նախիջևան, օգոստոսի 2-ին

Աչքից ու մտքից հեռու ընկած այս գաւառի հայ ժողովուրդը ևս կատարեց ընտրութիւններ բանութեան տարասվների տակ։

Պատուիրակների առաջին ժողովը չը կայացաւ, որովհետև հարկաւոր թւով ծախսանները չը կային։ Երկրորդ բաղմամարդ ժողովում փոխանորդ Լևոն վարդապետը կօնդակները յոանկայս կարդալուց յետոյ առաջարկեց նախագահ ընտրել։

Դ. կուսակցութիւնը ուզեց անպատճառ մի ուսանողի նախագահութիւնը անցկացնել։ փոխանորդի հարցին՝ արդեօք բոլորը կամենում են առաջարկվածի ընտրութիւնը՝ լսվեցին ձայներ—ոչ, ոչ։ 28 ձայնով հակառակ 70 ձայնի նախագահ ընտրվեց բժիշկ Շահնազարեանը։ Աթոռը նախագահին յանձնելուց և ցանկանալուց յետոյ, որ կուսակցական ընտրութիւնները ինչ-ինչ շահերի չը ծառայեն, այլ լինեն գիտակցական և արդարացնեն Վեհ. Կաթողիկոսի կոնդակները, փոխանորդը հեռացաւ։ Սկսվեց աղմուկ։ Հայհոյում էին, սպառնում էին աջ ու ձախ. բարձրանում էին բռունցքներն օդի մէջ և ծածանվելով ցած իջնում։ Մօտ երկու ժամ խաղաղացնելու համար զուր ջանքեր գործ դրեցին։ յետոյ և կամենալով մեծ պատասխանատուութիւնից ազատ լինել՝ նախագահը փակեց ժողովը։

Փոխանորդը երրորդ ժողով հրաւիրելու համար պահանջեց երկու կուսակցութիւններից հաշխատութիւն, որ դարձեալ կոպտութիւններ և սպառնալիքներ տեղի չեն ունենայ։ Տրվեցին երաշխաւորութիւններ և ի պատասխան իր հեռագրի փոխանորդը Վեհ.-ից թոյլատուութիւն առանալով՝ հրաւիրեց երրորդ ժողով։

Դարձ. մարդիկը չը մասնակցեցին. ժողովը անցկացաւ խաղաղ։ Պատուիրակ ընտրվեցին՝ Բաբան Մելիք-Բաբախանան և բժ. Շահնազարեան։ 30-ին պատուիրակների ժողովն էր։ Գիւղացի պատուիրակները իր մօտ կանչեց Դ. զինուորական խմբապետ Յ. Պ. և տուեց հարկաւոր հրահանգները. այն է՝ անպատճառ պատգամաւորը ընտրեն Ռուբէն Մելիք-Մուսանին և Վ. Փափազեանին, որոնց անունները ևս գիւղացի պատուիրակները գրեցին և վերցրին։ Պ. սպառնաց գիւղացիներին, որ հակառակ դէպքում նրանց կեանքը վտանգի մէջ է։ Ժողովը բացեց փոխանորդը և առաջարկեց նախագահ ընտրել։ Ընտրվեց բժ. Աթաբէկեանը։ Փոխանորդը հեռացաւ։ Եղան ամենատակ զրոյց և դէմ խօսակցութիւններ. կուսակցութիւններին ամուսնացնել, գպրոցները կանոնաւորել, կրօնը զատաւանդել իբրև մի բարոյական գիտելիք։ Ամեն խնդիր վճռվում էր ձայների մեծամասնութեամբ. երբ դաշնակցականները տեսնում էին, որ խօսքի տակն են մնում, իսկոյն դիմում էին գիւղացիներին, որոնց համար հերիք էր Պ.-ի հայացքը, որ բոլորը ոտի կանգնէին և հարցը համաձայնվեր ձայներով։ Այս ևս չը մոռանամ յիշելու, որ բոլորվին կողմնակի մարդկանց թոյլ էր տրվում խօսելու, իսկ պատուիրակներին արգելվում։ Գիւղացիները Պ.-ի թելադրութեամբ պատրաստի պասած անունները գրեցին. պատգամաւորներ եղան—Ռուբէն Մելիք-Մուսան և Վ. Փափազեան։

Անցորդ

(Ախալքալաքի ընտրութիւնները)

Վերջապէս մեր գիւղացիութիւնն էլ մի փոքր շարժվեց, կենսունակութեան և ինքնուրոյն գոյութեան մի թեթև ցոյց արեց։ Ամսես 23-ին տեղի ունեցաւ էջմիածնի 3 պատգամաւորների ընտրութիւնը։ Ընդամենը 69 ընտրողներից 13-ն էին բացակայ։ Ընտրութեան ժամանակ մեր իբր թէ «ծայրայեղ ձախակողմեան» Դաշնակցութեան տեղական կազմը ամեն հնար գործ էր դրել իր թեկնածուներին անցկացնելու, և իր՝ գիւղերում ունեցած ազդեցութեան վրա այնքան վստահ էր, որ դեռ մի ամիս առաջ իր ձեռքում եղած 5 ձայնով (քաղաքից) արդէն ընտրութիւնը կայացրել էր և սպասում էր այս օրվան, որ օրինաւորութիւն տար և յայտարարէր ի գիտութիւն համայն հայ ազգի։ Ժողովը բացվեց և Դաշնակցութեան պ. զեկավարները սկսեցին իրանց գործը. ինչ վարդապետ յոյներ, ինչ փառաւոր գպրոցներ, քանի-քանի դեսեատին հող, քանի մի հազար բարիք էր, որ անսպառ աղբիւրի պէս թափվում էին գիւղացի ընտրողների առաջ, որպէս զի միամիտ գիւղացին հողի անուն լսելով խաղցրն ընտրէ այդ պարոններին և գուցէ թանը տարէ նոր սատած «լրացուցիչ նադէլները» վարելու (վանապատական հողերի մասին է խօսքը)։ Բայց, ինչպէս վերևն ասացինք, այս անգամ մի քանի ՀՆՉԻՆ քարեր հանդիպեցին պարոններին։ Գիւղական ինտելիգենցիան, մացած գիւղացի ընտրողների հետ բոլորովին այլ հակումներ ցոյց տուեց և չուզեց հաւատալ ագրարական հարցը ձեռքի մի թափով լուծող այդ պարոններին։ Նրանք պարզ կերպով գրին, որ մենք գիւղացիներս մինչև այսօր հնչված ու զրկված ենք եղել, մենք այսօր մեր մարդը պէտք է ուղարկենք մեր շահերը պաշպանելու։ Այնուհետև սկսվեցին ճառերի և զանազան մանեօվրների մի մեծ շարք, սակայն ոչինչ դուրս չեկաւ։ Յանկարծ լոյս ընկաւ թեմական առաջնորդի մի գրութիւնը, ուր հակառակ Վեհափառի կոնդակի՝ առաջարկվում է գաւառը և Ծալկան երեք ընտրողական շրջանի բաժանել և ջոկջոկ մի-մի պատգամաւոր ընտրել. այսպէս ա. մասի գործակալութիւնը 38 ձայնով (38,000 հոգու կողմից) ընտրէ մի պատգամաւոր, բ. մասի գործակալութիւնը 22 ձայնով մի պատգամաւոր և Ծալկան 9 ձայնով մի պատգամաւոր։ Եւ քառանդամ բանաձևի կրակա կողմնակից Դաշնակցութիւնը երեք անհաւասար մասերի բաժանում, մի գուցէ որևէ շրջանում անցնի գոնէ իր մի թեկնածուն։ Կատարվում է ընտրութիւնը. հաշում են քուները և, օ ոճիր, Դաշնակցութեան ոչ մի թեկնածուն չէ անցնում։ Երեքն էլ անցնում են գիւղացիների թեկնածուները։ Քաղաքի ճնշված մասը ուրախութեամբ ողջունեց գիւղացոց տարած այս յաղթանակը «ամենայաղթի» վրա։

Մի բան զարմանալի էր, որ այս անգամ դաշնակցական մարդկանց հոտն անգամ չը կար, սակայն դա էլ երևի մի թիւրիմացութիւն էր կամ դիպլոմատիական մի սխալ... Մի ուրիշ ընտրող երևոյթ. այստեղ Դաշնակցութիւնը բլօկ էր կազմել... ընկերներս ս.-դեմոկրատների հետ։

Նախագահում էր ընտրված Ուխատնէս վարդապետը։ Ընտրվեցին պ. պ. Արամ Տէր-Գրիգորեան, Հմ. Սիմէօնեան և Ա. Մնիչեան։

Ն.

ԱՌԱՋԻԿՆԱՅ ԴՈՒՄԱՅԻ ՀԱՄԱՐ

—

—Մինիստր-Նախագահ Սոլիպկինի մասնաւոր կանցելարիան, «Բիր. Վեդ.»-ի ասելով, մշակվում է Գեղական Դումայի ընտրութիւնների համար օրէնք, որին իբրև հիմք դրվում է «խաղաղ վերանորոգման» կուսակցութեան կարծիքը, այն է՝ քաղաքների համար ուղղակի, իսկ գիւղացի բնակչութեան համար երկաստիճան ընտրութիւններ։ Մինիստր-Նախագահը անձամբ զեկուցում է ամենուրեք ուղղակի ընտրութիւնների ձեր։

—Ներքին գործերի մինիստրութեան մօտ առաջիկայ շաբաթին կը բացվին խորհրդակցութիւններ ընտրական հարցի վերաբերմամբ։ Երբ ընտրութիւնի վերաբերմամբ առաջադրված գործերը նկատված և կարգաւորված կը լինեն, այն ժամանակ կը յայտարարվի նրանց գործադրելու եղանակին վերաբերող ուկազը։ Կառավարութեան հիմնական խնդիրն է մշտական հեռանել ընտրութիւնների ընթացքին և հնարաւորութիւն ունենալ հարկաւոր դէպքում համապատասխան ճնշում գործադրել, որպէս զի Դումա չընկնեն ծայրայեղ տարրերը։ Մինչև անգամ ընտրութիւնների այն ազատութիւնը, որ զգայութիւն ունէր առաջին անգամ, այժմ համարվում է շատ լայն, որովհետև ցանկալի հետևանքները չը տուեց։ Եթէ մինչև անգամ ժողովրդի մի մասը այս պայմանների մէջ հրաժարվի ընտրութիւններից, այնուամենայնիւ դա չէ կարող նոր հիմունքներով Դումա հրաւիրելու համար խոչընդոտ համարվել։ Կառավարութիւնը, կամ աւելի ճիշտ պալատական դասը, հաստատ վճռել է ստեղծել նրանց հրամաններին հնազանդվող Գեղական Դումա, որի օգնութեամբ և հանել իսկական ռուսների գեղական հիմունքների ամրացմանը։

«Перел.»

—Ապագայ Գեղական Դումայի պատգամաւորների թիւը, համաձայն առաջիկայ ընտրական կազմակերպութիւնների մօտիկ անձնաւորութիւնների տեղեկութեան, վճռված է աւելացնել համարեա երկու անգամ։ Այդ նպատակով պալատական ճարտարապետական վարչութիւնը յանձնարարված է նիստայացնել կարճ միջոցում, Տաւրիկեան պալատի շինութեան լայնացնելու ուրուագիծը, այն հաշուով, որ մեծ դահլիճում, որտեղ Դումայի նիստերն է կայանում, կարելի լինի տեղաւորել 860-ի չափ պատգամաւորական տեղ. մեծացնել նոյնպէս և կառավարչական ներկայացուցիչների, մամուլի ներկայացուցիչների և հասարակութեան համար օթեակները։ Այդ նախագծի իրագործումը այն հաշով է կատարվելու, որպէսզի վերաշինման աշխատանքները չը խանգարեն նոր Դումայի նիստերի բացմանը իր ժամանակին, համաձայն Բարձրագոյն ուկազի։

«Перел.»

—Նախընտրական պայքարը, որ դեռ թոյլ արտայայտութիւն ունի, արդէն ստեղծել է մի քանի նոր կուսակցութիւններ. «Бирж. Вѣд.» հաղորդում է նոր կուսակցութեան վերաբերող մանրամասնութիւններ, որ կազմվում է առանձին խմբակից, որը իրան անուանում է չափաւոր առաջադիմականներ։ Այդ կուսակցութիւնը շատ բանով է նման խաղաղ վերանորոգման կուսակցութեանը, այն զանազանութեամբ միայն, որ չէ թոյլ տալիս Ռուսաստանի ծայրերի համար ինքնավարական գործի մէջ ոչ մի իջնուրդնութիւն։ Այդ կուսակցութիւնը ունի բաւական թւով անդամներ, որոնց մէջ քիչ չեն և Պետական Խորհրդի անդամներից և այլ ասողակիրներից։ Կուսակցութեան կանոնադրութիւնը վերջնական մշակումից յետոյ մօտ օրերս կը ներկայացվի հաստատութեան։ Կուսակցութեան սկզբնական գործունէութիւնը կը սկսվի Պետերբուրգում, Մոսկվայում, Խարկովում, Օդեսայում և Կիևում։ Կուսակցութիւնը ունի բաւական միջոցներ լայն և ընդարձակ ագիտացիա անելու, թերթիկներ հրատարակելու և կոչ անելու, իր ներկայացուցիչներին Ռուսաստանի զանազան կողմերը ագիտացիայի նպատակով ուղարկելու համար և այլն։

—Օգոստոսի սկզբներում Պետական Խորհրդի կենտրոնական կուսակցութիւնը վերսկսում է իր գործունէութիւնը, որը յուլիսին, մի ամսվայ ժամանակով դադարեցրել էր։ Կենտրոնի կուսակցութիւնը անմիջապէս ձեռնարկում է այն խնդիրների մշակման, որոնք նոր Պետական Դումայի առաջին նիստերի քննութեանը պէտք է ենթարկվին։ Կուսակցութեան բիւրոյի նախագահ Ա. Ս. Երմոլովը սակայն չէ վերադառնալու մինչև աշնան վերջը և նրա փոխարէն այդ պարտականութիւնները կը կատարվի Մ. Վ. Կրասովսկին։ Կուսակցութիւնը նպատակ ունի մօտիկ յարաբերութեան մէջ մտնելու խաղաղ վերանորոգման կուսակցութեան հետ։ Օգոստոսի սկզբներում կը սկսեն իրանց գործունէութիւնը 3 յանձնաժողովները, որոնք ընտրված կենտրոնի կուսակցութիւնից, մշակելու համար հետևեալ խնդիրները. առաջին՝ մամուլի դատապարտութեան վերացումն, երկրորդ՝ ինքնավարութեան և երրորդ—մասնաւոր հոդերի գրաւումն։ Առաջին յանձնաժողովի նախագահ է Տատանցեվ, երկրորդի—Բարզոյլ և երրորդի—Խոմեակով։ Յանձնաժողովի աշխատանքները վարելու են մինիստրների խորհրդակցութեան նոյն հարցերի վերաբերող աշխատանքների հետ զուգընթաց, բայց և այնպէս կատարեալ անկախ կերպով և համաձայն այն հիմնական հայեացքների, որոնք մշակված էին կուսակցութեան անդամներից Դումայի և Պետական խորհրդի նիստերի ժամանակամիջոցում։

«Перел.»

—Պետական Դումայի արձակումից յետոյ ներքին գործերի մինիստրը մի գրութեամբ դիմել է սինոդին և հարցաքննում արել Դումայի նախկին անդամների գործունէութեան մասին։ Սինոդը իր կողմից դիմել է այն թեմերին, ուր նրանք պաշտօնավարում են, և տեղեկութիւններ պահանջել այդ առիթով. միևնոյն ժամանակ սինոդը ցանկութիւն է յայտնել, որպէսզի տեղեկութիւնները պրէվն ոչ թէ հոգևորականների կողմից, այլ ծխականների։ Յուլիսի 29-ին Վլադիմիրի նահանգից տեղեկութիւններ են ստացվել քահանայ պատգամաւոր Պօքակովի մասին։ Թէ հոգևորականութեան և թէ ծխականների տուած տեղեկութիւնները միմեանց հակառակ են։ Թեմական յայտարարը զեկուցանում է, որ քահանայ Պօքակովը վաղուց արդէն մասնակից էր «անմաքուր գործերի»։ Յանդուգն ուղղակի Պօքակովին «անարխիստ» է անուանում, մինչդեռ իշխանութեան կատարած քննութեան ժամանակ, գիւղացիները յայտնել են, որ Պօքակովը միշտ էլ նրանց համար եղել է հայր և բարեկամ, որ նրա վրա էին դրել իրանց միակ յոյսը և այլն։ «Բ. Ե.»

ՊԱՐՍԿԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԱՅԻ ՄԱՂԹԱՆՔ

—

Երևան, օգոստոսի 6-ին

Ամսես 6-ին տեղիս ս. Լուսաւորիչ եկեղեցում երկսեռ խուռն հաւաքութեան ներկայութեամբ պատարագից յետոյ մաղթանք կատարվեց Իրանի Շահն-շահի արևշատութեան և պայծառութեան համար։ Մաղթանքին ներկայ էին պարսից հիւպատոսը, դաղին, պարսկահպատակ հայ և թուրք վաճառականները և տեղիս թուրքերից մի քանիսը։

Ներկայ էր թեմիս սրբազան առաջնորդ տէր Յուսիկ եպիսկոպոսը։

Մաղթանքից յետոյ սրբազանը դառնալով հայ և թուրք հաւաքականութեանը՝ ասաց մօտաւորապէս հետևեալը.

«Հայ և թուրք եղբայրներ, այսօր Իրանի Շահի տուած արտօնութիւնների պատճառով մենք հաւաքվել ենք այստեղ շնորհակալական մաղթանք կատարելու և աղօթելու առ Աստուած, որ հին Պարսկաստանի Վեհապետը երկարակեաց ու երջանիկ լինի իր ժողովրդի հետ միասին։ Մենք, որ դարեր շարունակ ամեն տեղ և յատկապէս Իրանում վայելել ենք պարսից վեհապետների հայրական խնամքները ու ապրել ենք եղբայրաբար ու սիրով, այս Աստուած որ այսուհետև էլ նոյն սիրով ու եղբայրութեամբ ապրենք։ Ինչպէս եկեղեցիներում ու մզկիթներում մոռանում ենք մեր թշնամութիւնները ու եղբայրաբար ենք վերաբերվում իրար, այս Աստուած որ մեր աւօրեայ կեանքումն էլ նոյնը լինենք, կապված անխզելի եղբայրական սիրով և վերջ տուած եղբայրասպան կռիւներին։

Պարսկաստանում գտնված մի փոքր «զաղթական» հայերը թող երախտագիտութեամբ յիշեն Շահի իրանց տուած արտօնութիւնները։ Թող Իրանը պայծառանայ և Արևելքում նոցից իր գործունէութեամբ ու կուլտուրայով։ Մաղթենք երկարակեցութիւն ներկայ Շահին և Կիրոսների դարաւոր գահին ու թագին յարատևութիւն ու երջանկութիւն»։

—Ամէն, ամէն...։

Վերջում սրբազանը խնդրեց կօնսուլին, հայերի և մասնաւորապէս Երևանի հայ հասարակութեան երախտագիտութիւնն ու շնորհակալիքը մատուցանել առ գոյս Շահն-շահի։

Ապա խօսեց կօնսուլը։

«Այսօր մենք հաւաքվել ենք այս սուրբ տեղը Շահի մեզ պարգևած արտօնութիւնների պատճառով նրա համար երկար կեանք խնդրելու։ Եթէ չը լիներ այդ հանգամանքը, գուցէ և մենք չը հաւաքվեինք և ես հոգու ցնծութեամբ տեսնում եմ մեզնից սերված հայերի այնքան սէրն ու համակրանքը դէպի պարսից Վեհապետը, բայց ինչպէս երկու տարի առաջ էլ ասել եմ մզկիթում, նոյնը և կրկնում եմ այսօր այստեղ, որ դուք հայերդ ձեր համակրանքը ցոյց պիտի տաք և գործով, եթէ այստեղ դուք, հայեր, վիրաւորեք ինչով և լինի մի պարսկահպատակ թուրքի, դրանով կը վիրաւորեք հէնց իրան Շահին. եթէ անպատուէք պարկին, անպատուած կը լինիք և իրան Շահն-շահին. ուրեմն ես սրտանց ցանկանում եմ, որ այսուհետև էլ ապրենք սիրով ու եղբայրութեամբ, որով և պատուած կը լինենքիրանի պետին»։ Այս խօսքերից յետոյ ձեռք մեկնեցին իրար սրբազանը, կօնսուլը, դաղին և պատուաւոր թուրքերը։

Թարգմանում էր Ա. Տէր-Աւետիքեանը, որը իր հերթին ասաց և մի քանի խօսք ընդհանուր խաղաղութեան և սիրոյ վերաբերմամբ։

Մի թուրք ուսանող շնչեց, որ մենք էլ այստեղ միանանք և իրագործենք մեր պահանջները, ինչպէս այդ արվեց Պարսկաստանում։

Դաղին, որ նոր է նշանակված և կրթված ու համակրելի մի անձնաւորութիւն է, ասաց.

«Քանի դեռ մենք գտնվում ենք այս եղբայրասպան կռիւների մէջ և պահվում ենք անտարբեր գրութեամբ, մեզ հարկաւոր է նախ և առաջ մեր յարաբերութիւնների մասին հոգալ, այնուհետև ապագայ գալիքների մասին հնչտ է մտածել։ Հաշտութեան խօսքերը նոցից հնչեցին, և այն, դարձեալ եկեղեցու բեմից, բայց նրանք վաղուց կորցրել են իրանց տպաւորիչ թափը, վաղուց նրանք կոմեդիայի դրեստ են հագել և վաղուց է որ հնչվող հաշտութեան շուրջը կասկածն է պտտում. ուր էր այս անգամ մենք օպտիմիստ հայացքով նայէինք այդ հաշտութեան խօսքերին...։ Վերջում պ. Տէր-Աւետիքեանը կարդաց շնորհակալութեան ու երախտագիտութեան այն հեռագիրների պատճէնները, որոնք պիտի ուղարկվէին Շահին և թագաժառանգին Երևանի հասարակութեան կողմից։

Ռ. Պողոսեանց

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

—

«Бирж. Вѣд.» լրագրում տպագրված է մի զեկուցութիւն, որ տեղի է ունեցել են պարսկական դեսպանութեան ազգ. խորհրդականի հետ, որը փոխարինում է ներկայումս Թէհրանում գտնվող պարսկական դեսպանին, պարսկական սահմանադրութիւն յայտարարելու առիթով։

Այն հարցին, թէ «որքան ժամանակ է սկսված Պարսկաստանում ազատագրական շարժումը», խորհրդականը պատասխանել է. «Իսկապէս ազատագրական շարժումը Պարսկաստանում սկսվել է եօթը տարի սրանից առաջ, երբ ժողովուրդը, դժգոհ գոյութիւն ունեցող օրէնքներից կամ աւելի ճիշտը՝ ամենատակ կամայականութիւններից, հովանաւորումներից, ամենքի անհաւասարութիւնից օրէնքի առաջ, սկսեց հարկադրաբար պահանջել վերացնել օրէնքները։ Բայց առանձնապէս զօրեղ կերպով շարժումը արտայայտութիւն ստացաւ այս վերջին երեք ամիսներս, երբ Թէհրանում բայլա յայտարարվեց (պարսկերէն գործադուլ), որի ժամանակ փակվեցին բոլոր մագազինները, ընդհատվեցին բոլոր աշխատանքները կայ»։—«Արիւնահեղ ընդհարումներ տեղի ունեցա՞ել են դեռ մօտ»։—«Եղել են, բայց շատ անշան։ Ամբողջ Պարսկաստանում մօտ 15 միլիոն բնակիչ կայ (սատարիսքաս չէ լինելու պատճառով ճիշտ թւերը ասել չեմ կարող), սակայն վնասածները եղել են ընդամենը երկու հոգի»։—«Ո՞ւմ կողմն էին կանգնած զօրքերը»։—«Զօրքը շարունակ եղել է կառավարութեան կողմը և ճնշել է անկարգութիւնները։ Զէնքով նա սկսեց գործել միայն այն ժամանակ, երբ ժողովուրդը, փակվելով մէշիդում, սկսեց քարեր նետել զօրքի վրա և վիրաւորեց զօրապետին։ Այն ժամանակ մէշիդի վրա համազարկեր արձակեցին. և երկու հոգի այդտեղ սպանվել են։ Ահա ազատագրական շարժման բոլոր զոհերը»։—«Սահմանադրութիւնը անսպասելի՞ էր արդեօք»։—«Այն լայն ձայնով, որը պարգևել է նորին մեծութիւն շահը մեր ժողովրդին, անպայման անսպասելի էր, որովհետև ժողովուրդը ձգտում էր միայն օրէնականութեան։ Բայց շահը լաւ ըմբռնեց, որ ժամանակի ընթացքում այդ բարենորոգումները այլ ևս չեն գոհացնելու ազգաբնակութեանը, ուստի վճռեց միանգամից տալ ժողովրդին ժողովրդական ներկայացուցչութիւն, անուանելով նրան «ժողովրդական ժողով»։ Այդ ժողովը ունի օրէնսդրական գործունէութիւն, այնպէս որ ամբողջ ապագայ աշխատանքը կախված է արդէն նրանից մի»։—«Իսկ Բրը կը գումարվի այդ ժողովը»։—«Ժամանակամիջոցը դեռ ևս ճիշտ որոշված չէ, բայց ես կարծում եմ, որ տեղի կունենայ ամենամօտիկ ապագայում, որովհետև անունն էլ լաւ յայտնի է, որ լոկ խոստումներով ժողովրդին չի կարելի հանգցնել»։

ՄՈՌԱՑՎԱԾ ԱՆԿԻՒՆՆԵՐ

VII

Դարաչիչագի շրջանում տիրում է հողերի համայնական սիստեմը և այդ գոյութիւն ունի 20-ից մինչև 30 տարուց ի վեր, մինչդեռ հողերի համայնացումը մինչև այժմ էլ Երևանի նահանգի մի քանի մասերում, առանձնապէս դաշտային պտղաբերութեամբ հարուստ տափարակներում կարելի չէ լինում մտցնել, և եթէ այդ ուղղութեամբ շարժումն սկսված է և մի քանի տեղերում գործադրութիւն գտած, այն էլ մեծ դժուարութեամբ, մեծամեծ խոչընդոտներով յարուցված հողաբաժիններով հարուստ մարդկանց կողմից, թէև այս շրջանում էլ իր ժամանակին եղել են խոչընդոտներ, որոնց առաջն առնելու համար տեղի են ունեցել կօմպրոմիսներ, այն է շատ հող ունեցողներին այնուամենայնիւ աւելորդ բաժիններ թողել են։ Հողերի համայնացման այսպէս դիւրին իրագործելը պէտք է բացատրել նրանով, որ այս շրջանում հողը այն արժէքը և այն արդիւնքը չունի, ինչ որ հարուստ, պտղաբեր տափարակներում։

Հողը, ընդունված կարգով, հաւասարաչափ բաժանվում է բոլոր գիւղացիների վրա, լինի մեծ թէ փոքր, իգական սեռի թէ արական և լով ռուս պահպանողական մամուլի հետ ներդաշնակութիւն կազմել, այս վերջինի նման, Պետական Դուման փակվելուց յետոյ, մի շարք ափեղցփեղ հայհոյանքներ տեղաց սրա հասցէին, անուանելով Դուման խիստ վատնդաւոր, նրա անդամներին ագէտ, անշնորհք և այլն, իսկ նրան ցրվելը համարելով մի «մեծ քաղաքական իմաստութիւն», «խելացի հեռատեսութիւն»։

Զը բաւականանալով իր բռնած անվայել վարմունքով, գերմանական այդ մամուլը ըստ կսեց նաև յանդիմանութիւն անել և կը շարունակել ֆրանսիական չափաւոր մամուլին, որ սա բոլորովին չէը միանում սողունների սեղմած այդ ներդաշնակ համերգին և փոքր ինչ տարբեր վերաբերմունք ունէր թէ դէպի Պետական Դուման և թէ դէպի նրան ցրվելու քայլը։

«Պետական Դուման ափաշքարա կերպով Ռուսաստանը դէպի անդունդի եզերքն էր տանում,—«Моск. Вѣд.» թերթի համեմատ կը գրում է գերմանական ու ուսարիական մամուլը,—իսկ ֆրանսիական թերթերը դեռ կշտամբում են ռուս կառավարութիւնը նրան ցրվելու համար»։

Պատասխանելով այդ սողունները, ֆրանսիական խիստ չափաւոր, միշտ վերին աստիճանի զգոյշ և ոչ-պակաս պոչ խաղացնող «Temps» թերթը վերջերս իր առաջնորդողներից մէկում նորից այն միտքն է կրկնում, որ Պետական Դուման, նրա հակառակորդների շարունակաբար կրկնվող յայտարարութիւնների հակառակ, բոլորովին յեղափոխականների մի ժողովածու չէր, այլ որ նրա մեծամասնութիւնը սահմանադրական-ամիկալարների և այլ չափաւոր կուսակցութիւններից էր կազմված։

«Բայց ինչ արեցին ռուս մինիստրները, ասում է «Temps»-ը, որպէսզի ժողովրդային ներկայացուցիչների վստահութեանն ու աջակցութեանը արժանանային։ Բոլորովին նպաստակ չունի և խիստ ցաւալի է նորից վերադառնալու խօսել այն ըէժիմի մասին, որ գոյութիւն ունէր Ծայրագոյն Արևելքում տեղի ունեցած պատերազմից առաջ։ Բայց ինչ արվեց այդ պատերազմից յետոյ, այն բոլորից յետոյ, երբ կայսրութեան տկարութիւնը ակնայայտի եղաւ ամենքի համար, որպէսզի իրերի դրութիւնը բարելաւի։ Խոստում խոստումի հետևից, մանիֆեստ մանիֆեստի հետևից։ մի ոչ տեսնված բարդ ընտրողական իրաւունք, որը պիտի կառավարութեան համար ցանկալի պատգամաւորներ տար, յետոյ էլ Դումայի արձակումը, մի քանի պօգրոմներ և անթիւ անհամար կողոպտութիւններ. ահա այն բոլորը, ինչ որ արեց կառավարութիւնը և որոնց գովաբանելու համար և ոչ մի կողմ անկարելի է գտնել։ Ոչ մի իրական միջոց չը ձեռնարկվեց, որպէսզի ագրարային հարցը փոքր ինչ կարգի բերվէր։ Ոչինչ չարվեց, որպէսզի բարելավէր ռուս գիւղացի բարեկեցութիւնը, որը հէնց այդ պատճառով էլ շատ մասնիկ դարձաւ յեղափոխական պրոպագանդայի համար։ Ամեն մի կարգը պահպանելու կողմնակցի համար կասկածից զուրս է խլրտումներ առաջացնողների և յեղափոխական գործադուլներ կազմակերպողների յանցաւոր լինելը, բայց մթթէ պակաս յանցաւոր է կառավարութիւնը որը ահա տարուց աւելի է, որ ոչ մի հոգ չի տարից թեթևացնելու համար այն տառապանքները, որոնք իսկական պատճառներն են բոլոր գործադուլների ու ապատամբութիւնների... Ռուսական ծառը շատ զօրաւոր է, բայց նրան չեն թոյլ տալիս զարգանալ իր ամբողջ ոյժով այն պարզպանները, որոնք չափազանց մեծ քանակութեամբ, առանց որևէ օգուտի, ծծում են նրա անդարար նիթերը։ Դուման կը սկսէր նրա անպէտք ճիւղերը կտրատել այնպիսի եռանդով, որ համապատասխան լիներ իր երիտասարդութեանը։ Այդ դէպքում կը տուժէին միայն մի քանի եսամոլ շահեր, բայց Ռուսաստանի բոլոր իսկական բարեկիրթութիւնները միմիայն ուրախանալ կարող էին դրա համար... Դուման պաշպանելով, մենք միմիայն ի նկատի ունէինք Ռուսաստանի բարեկեցութիւնը և նրա մեծութիւնը, նախ նրա համար, որ մենք նրա դաշնակիցներն ենք, և ապա նաև ուրիշ պատճառներով»։

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ՀԱՅԱՁԻՏԻՑ

—

Յուլիսի 28-ին

Ամսես 26-ին, տեղիս երիտասարդութեան նախաձեռնութեամբ, կազմվեց մի երեկոյթ յօգուտ կարիտաս եղած գիւղացիների։ Դահլիճը լիքն էր երկսեռ բազմութեամբ։ կարելի է ասել, որ երեկոյթը լաւ անցաւ։ Խօսեց պ. Ա. Սինանեան, ուսանաւորներ կարդացին բաւականին աջող պ. Վ. Փիլոյեան և Մ. Աւետիսեան։ Վ. Դօլլաթեանը կարդաց իր ինքնուրոյն՝ «Հերոսի մահը» և «Երաշ» ոտանաւորները։ Պ. Վ. Աֆրիկեանի կազմած երգեցիկ խումբը և ասիական պարերը լաւ տպաւորութիւն թողեցին հանդիսականների վրա։ Եղան նաև կենդանի պատկերներ։

Օր. Լալայեան շատ լաւ երգեց «Պարի աղջիւր» երգը։ Երեկոյեան ժամը 11-ին դիսկասները հեռացան գոհ սրտով։ Եկամարները խոստանում են մօտ օրերս տալ մի ներկայացում, դարձեալ բարեգործական նպատակով։ Ցանկանում ենք նրանց կատարեալ աջողութիւն։ Պէտք է ասել, որ մեր նամաքաղաքցի՝ Թիֆլիսաբնակ պ. Մ. Աւետեանը յաճախ անում է դասախօսութիւններ։ որին ուրախութեամբ են յաճախում տեղացիք, ի բաց առեալ վաճառականները և չինովնիկ դասակարգը։ Շնորհակալութիւն պարոնին, որ արթնացնում է մեր թմրած բարքը։

Երեկ Երևանից եկած մեր համաքաղաքացի Արամ Խանամիրեանը պատմեց մի դաժան իրողութիւն։ Խանամիրեանի ասելով, երևանում մի խանութում, երբ ինքը փող էր հանում, մօտենում են երկու երիտասարդ հայեր, հարցնում են Խանամիրեանին որտեղացի լինելը և Երևանից մեկնելու ժամանակը ու հեռանում են։ Երբ ամսես 25-ին Խանամիրեանը մեկնում է Երևանից ու հասնում է Քանաքեռ գիւղի մօտ, նրա վրա յարձակվում են Երևանի խանութում եղած 2 չարագործ հայերը, հանում են դաշոյնները սպանում են սպանել, և պահանջում են փող։ Խանամիրեանը տալիս է նրանց իր մօտ եղած 250 ր. 90 կ. փողը, բայց չարագործները չեն բաւականանում։ Սակայն այս գեղեցիկ կարգը չէ իրագործվում այն մտքով, ինչ մտքով ընդունված է։ Նախ՝ շատ գիւղերում հողաբաժանութիւնը դիտմամբ ձգձգ

ները չը բաւականանալով դրանով, հանում են նրա չուխան և խլում նրա արծաթեայ ժամացոյցը։ Արամի հետ եղած մի սօլակցի հայից խլում են 10 ր. փող ու հեռանում են։ Աչքներս լոյս. այսուհետև սարսված ենք հարցերից ևս պաշտպանվելու։ Ի դէպ՝ յայտնում ենք մեր խորին զղջումը մեր համաքաղաքացի Լևոն Խաչիկեանին նրա կատարած սխրագործութեան համար Երևանում։ Այդ պարանը մեր քաղաքի բարոյապէս փչացածներից մէկն է։

Վեհունի

ՆԱՄԱԿՆԵՐ ԱՍՏՐԱԽԱՆԻՑ

I

Աստրախան, յուլիսի 25-ին

Ներկայ երերուն և տատանվող ժամանակում, ներկայ սրի և կրակի օրերում, երբ ամեն ինչ ջարդվում, փոշիանում և վերածնութեան է ենթարկվում՝ մեր Աստրախանի կեանքն էլ ունի իր ուրոյն ընթացքը։ Որովհետև Աստրախանի գաղութը տասնակ տարիներից ի վեր ծանօթ է առաւաստայերին՝ ուստի կարելոր ենք համարում այդ պատմական մոմենտի վեհ ճգնաժամին աստրախանցու բռնած դիրքը, նրա սիրուն ու հոգին, ցանկութիւնն ու մտքերը գնել հրապարակի վրա։

Վերջին ժամանակներս մեզ մօտ ամենքը հետաքրքրված են ծխական ժողովներով. մենք էլ կը սկսենք նրանցից։

Դեռ մի տարի առաջ այն տարեան անտարբերութիւն էր նկատվում զէպի ծխական ժողովները, որ շատ կարդնալ հարցեր լուծվում էին հազիւ 15—20 մարդու ներկայութիւամբ։ Բայց այլ եղաւ ժողովների պատկերը երբ հրատարակութիւնը մտաւ այդտեղ։ Հենց առաջին ժողովներում (անցեալ աշնանը) ժողովականների առագին մեծամասնութեան առաջ զրվեց ընդհանուր ձայնատուութեան հարցը, 21 տարեկանից սկսած, առանց սեռի և կոչման խտրութեան, որը անցաւ միաձայն։ Այնուհետև մեր ժողովները այլևս յօրանջելու տեղը չէին, այլ գրված հարցերը և նրանց լուսաբանութիւնները հետաքրքրելով շատերին՝ գրաւում էին զէպի ժողով։

Վերջերս ժողովի նիւթ է դարձել զղրոցական խնդիրը։ Յուլիսի 19-ին կայացած ժողովում զրված էին հետևեալ երկու հարցերը. 1. ընտրել մի ժամանակաւոր յանձնաժողով նոր թոյլատրված թեմական զղրոցի նախապատրաստական դասարանները բանալու համար և 2. օրիորդաց զղրոցի խնդիրը։ Նախագահը (պ. Յ. Մեղնիկեան) կարդալով ներքին գործերի նախարարի գրութիւնը թեմական զղրոցի բացման մասին, որը արդէն յայտնի է «Մշակ»-ի ընթերցողներին՝ աւելացրեց, որ թեմիս սրբազան առաջնորդը ի նկատի ունենալով, որ թոյլատրեան մի քանի պայմանակէտերի վերաբերեալ դեռ շարունակվում է բանակցութիւն Վեհափառ Կաթողիկոսի և մինիստրութեան միջև, առայժմ վարժատ է համարում հոգևորականի ընտրութիւնները կատարել ամբողջ թեմի ծխականներից, ուստի և առաջարկում է ընդհանուր ժողովին մնարել մի տարի ժամանակով մի յանձնաժողով, որին և լիազօրութիւն տալ բանալու միայն նախապատրաստական երկու դասարաններ թեմական զղրոցի համար։

Ծխականները ընդունելով այդ՝ ձեռնամուխ եղան ընտրութիւններին։ Փակ քուէարկութեամբ ընտրվեցին հետևեալ եօթն անձինք— Գէորգ քահ. Մկրտումեանց, Յովհ. Մեղնիկեանց, բժ. Յ. Կազբինցեանց, տիկ. Զ. Կազբինցեանց, երգ. հաւ. օգն. Ա. Լևխանեանց, Գէորգ Սուլթանեանց և Սարգիս Դանիելեանց, որից յետոյ ժամանակի ուշ լինելու պատճառով ժողովը փակվեց, թողնելով երկրորդ հարցը հետևեալ ժողովին, որը որոշվեց կայացնել ամսիս 26-ին, չորեքշաբթի օրը։

II

Յուլիսի 27-ին

Յուլիսի 26-ի ժողովը։ Այս անգամ զրված էր տեղիս օրիորդաց զղրոցի խնդիրը։ Այս զղրոցը հիմված է Աստրախանում 70-ական թուականներին կոչվում է «Օրիորդական թեմական զղրոց»։ Սկզբներում զուտ հայական զղրոցների ծրագիր ունենալով՝ վերջերս արդ ժանացաւ նոյն բաղդին, ինչ որ և Կովկասի մեր միւս զղրոցները, միայն տարբերութիւնը նրանումն էր, որ Կովկասում աւելի լաւ համարեցին փակել՝ քան առաջարկած ծրագիրներով դասաւանդել, իսկ մեզ մօտ ընդհակառակը։ Մինչև օրս առարկաները դասաւանդվում են ռուսաց լեզուով, բացի կրօնից և հայոց լեզուից. աշակերտուհիներն էլ ենթարկվելով տիրող մօդային—ռուսասիրութեան՝ «ոչ հոգոյ են և ոչ մարմնոյ», այսինքն ոչ կանաչագոյ հայերէն գիտեն, ոչ ռուսերէն։

Երբ հոգևոր իշխանութիւնը ձեռք քաշեց այդ զղրոցից, ծխական ժողովը ընտրեց մի յանձնաժողով երեք հոգուց բաղկացած, որոնք պիտի հոգ տանէին զղրոցի մնոտական վիճակի վրա, և օրոնց յանձնեցին զղրոցապատկան գումարները, տոմսերը և երկու եկեղեցիներից ծխական ժողովի որոշմամբ տարեկան 2600 ռուբլի։

Երբ անցեալ տարվայ օգոստոսի 1-ի ուկաղով մեր զրաված գումարները, կալուածները և զղրոցները վերադարձրին՝ ամենայն իրաւամբ ապասում էինք և մեր զղրոցի վերադարձմանը, բայց ստացվեց հակառակը։ Բանից զուրս եկաւ, որ այդ ուկաղը ինչպէս ամեն տեղերին՝ նոյնպէս և Աստրախանի թեմին վերաբերում է ամբողջովին, իսկ Աստրախան քաղաքին իր մի մասով միայն։ Եկեղեցական գումարները, կալուածները և զղրոցները մեր թեմում վերադարձրին ամենայն, իսկ Աստրախանում՝ միայն գումարները։ Երկար բանակցութիւններ սկսեցին թէ թեմիս սրբազան առաջնորդը թէ ծխական ժողովը՝ մի կողմից Դանիել Ղազանի հոգևորականի հետ և միւս կողմից Վեհափառ Հայրապետի միջոցով մինիստրութեան հետ, բայց բոլորն էլ ապարդիւն։

Վերջերս ծխական ժողովը իր նիստերից մէկում վճռեց. 1) կարճել եկեղեցիներից արվելիք նպաստը օրիորդաց զղրոցին և համաձայն օրենքի 1-ի ուկաղի բանալ Աստրախանում հայ օրիորդական զղրոց, այդ առիթով դիմել ժողովական զղրոցների դիրեկտորին հարկաւոր կարգադրութիւններ անելու, որպէս զի զղրոցապատկան գումարները վերադարձնեն նոր բացվելիք զղրոցին. 2) անտեսական մասը կառավարող յանձնաժողովի գործունէութիւնը վերջացած համարելով՝ ազատ համարել նրան իր վրաած պաշտօնից և պահանջել, որ իրան մօտ գտնվող գումարները ու տոմսերը վերադարձնէ նորընտիր հոգաբարձուներին, որի համար ընտրվեցին՝ Գէորգ քահ. Մկրտումեան, Յովհ. Մեղնիկեանց, բժ. Յ. Կազբինցեանց, տիկ. Զ. Կազբինցեանց, Ա. Լևխանեան, Գ. Սուլթանեանց և Ս. Դանիելեանց, և փոխանորդներ՝ Մեսրոբ Տէր-Զաքարեան և Յ. Սօլոլեանց։ Բայց յանձնաժողովը հրաժարվում էր գումարները վերադարձնելուց, իսկ դիրեկտորից կօնսիստորան ստացել էր մի այնպիսի գրութիւն, որը իր տեսակով օրիգինալ կարող է ծառայել։ Ահա այդ առիթով հրաւիրվել էր և ներկայ ժողովը։ Նախագահը (Գէորգ քահ. Մկրտումեանց) կարդալով անցեալ ժողովի արձանագրութիւնը անցաւ բուն խնդրին։ Նախ կարդաց դիրեկտորի այդ վերը յիշած գրութիւնը, որը աւելորդ չեմ համարում յայտնել ընթերցողներին։ Դերկնօրը ամսիս 7-ից № 1444 գրութեամբ պատասխանելով կօնսիստորիայի գրութեանը ծխական ժողովի որոշումների առիթով՝ ասում է. 1. ծխական ժողովներին իրաւունք չէ տուած (Ժող. օրին. հ. XI, մ. 1, հատ. հոգ. գործ.) գպրոցներ բանալու և փակելու, բացի դրանից իրան յայտնի չէ արդեօք կանոնաւոր է եղել ժողովը՝ ժողովականների թուի վերաբերմամբ, արդեօք օրէնքով սահմանված ձայնի իրաւունք ունեցողներն են միայն մասնակցել, թէ ուրիշներն էլ։ 2. Օգոստոսի 1-ի ուկազը գպրոցներ բանալու մասին վերաբերում է միայն Կովկասի Փոխարքայութեան և ոչ Աստրախանի նահանգին կամ ընդհանրապէս Ռուսաստանի միւս մասերին։ 3. Եկեղեցիներից տրվելիք նպաստը ասնց Վեհափառ Հայրապետի թոյլատրեան ծխական ժողովը իրաւունք չունի կարելու և եթէ կարի էլ՝ գպրոցը իր սեփական գումարներով կը պահվի, կրճատելով աշակերտների և դասարանների թիւը։ 4. Դպրոցի գրաժամանակը և գումարները չեն կարող վերադարձվել նոր գպրոցին, քանի որ նրանք կտակած են միայն այդ գպրոցին։ 5 Դպրոցը փակելու ոչ մի հիմք չը կայ, ջանի որ այնտեղ սովորում են 120—150 աշակերտ։ Այդ բոլորը ի նկատի ունենալով, «ես ոչ մի հիմք չեմ գտնում անցած յունիսի 14-ին կայացած ծխական ժողովի որոշումները կատարելու, եթէ նոյն իսկ ժողովը վիներ կատարեալ և համաձայն տիրող օրէնքների»։

Այդ առիթով երկար վիճաբանութիւններ տեղի ունեցան. մի մասը առաջարկում էր կէս առ կէս պայմանագրել գրութեան և ցոյց տալ բոլոր անհեթեթութիւնները, իսկ մի մասը առաջարկում էր՝ դնել արկղ գրութիւնը և թողնել անուշադիր, անցեալ ժողովի որոշումները իրագործել և յայտնել նրան ի տեղեկութիւն։ Վերջապէս վճռվեց—1. անցեալ ժողովի վճռի համաձայն բանալ Աստրախանում նոր օրիորդաց զպրոց, 2. կրկին դիմել յանձնաժողովին և պահանջել զպրոցապատկան գումարները և 3. զպրոցի շինութեան մասին՝ հոգաբարձութիւնը եկեղեցու երեցփոխանի հետ միասին կարճ ժամանակվանից դիմէ ուր հարկն է՝ պահանջելով այն տեղ, որտեղ յեսոյ ժողովը փակվեց։

Գրար. քահ. Բարտաշեան

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բաքու, 6 օգոստոսի

Պ. Խմբագիր,

Կարդացի ձեր «Պէտք է կազմակերպուց» յօդուածը։ Այո, ընդարձակ, խոր գիտնական հետազոտութիւններով չէ ուսումնասիրված հոդային հարցը։

Բայց ոմն է մեղաւորը։

Անտարակոյս հատատութիւնները և հիմնարկութիւնները, որոնք ունեցել են իրաւունքներ, միջոցներ և իրանց դիրքերի բարձրութեան վրա չեն եղել կանգնած։

Դուք հակառակ կարծիքի էք. մասնակից էք անում Տիխեվի ստատիստիքական կօմիտէի գիւղատնտեսական ընկերութեան վրա։

Բայց ինչ են դրանք արել։

Տիխեվը՝ պետական նեղ տենդենցիօզ շահերի տեսակէտից է ուսումնասիրել գործը։ Ստատիստիքական կօմիտէն իր ունեցած մի ջոցներին համեմատ բացասական արդիւնք է տուել։ Գիւղատնտեսական ընկերութիւնը շահագրգռել է մասնաւոր աշխատաւորների գրուածքները ոչ աջող եզրակացմամբ։

Դուք առաջարկում էք հոդային հարցի ուսումնասիրութեան գործը յանձնել հատատութիւններին, որովհետև ասում էք՝ «այդ տեսակ ուսումնասիրութիւնները չեն կարող անել մասնաւոր անձերը»։

Անցեալ փորձերը հակառակն են ցոյց տալիս։ Վերջին ամենահայտնի քայլը այդ ուղղութեամբ արվել է ռուսաց զեմստվոյի միջոցով և շատ անաջող հետևանքներ է տուել։

Եւ վերջապէս հիմնարկութիւնները և հատատութիւնները միջնորդների և շահագրգռողների դեր են կատարում միայն։ Նոյն մասնաւոր անձերի ձեռքով է գործը տեսնվում աշխատութիւնը անվում։

Էլ ինչու էք արհատաւորում մասնաւոր անձերի գործունէութիւնը։

Ինորոշելով մասնաւոր աշխատաւորի դերը այս գործում, դուք ասում էք՝ «լոյս տեսան միայն մի երկու մասնաւոր հրատարակութիւններ»։

Բայց ես միայն 70-ական. 80-ական. և 90-ական թուականներում հոդային հարցի վերաբերեալ երեք հրատարակութիւններ եմ գտել։ «Նոր-Դարում», «Արձագանքում», ձեր խմբագրութեամբ հրատարակվող «Кавказ. Сельское Хозяйство» շաբաթաթերթում և այլն։

Ձեզ յայտնի է, որ ազատ աշխատանքի ասպարէզում ես միակը չեմ եղել. դուք շատ լաւ գիտէք, թէ ինչպէս էր հալածվում ազատ խօսքը և վարձատրվում մասնաւոր ազատ աշխատանքը։

Մի՞թէ պարզ և հասկանալի չէ, որ գործը պէտք է կատարվի իսկական հասունացած աշխատաւորների ձեռքով, դրանց հաւաքական ոյժով և հատատութիւնների և հիմնարկութիւնների նիւթական օժանդակութեամբ միայն։

Հաւատացնում եմ ձեզ, որ այս ասպարէզում պատնութիւն վարողներ և վարձկան աշխատաւորները պէտք է տեղ տան ազատ մասնաւոր աշխատաւորին. եթէ այդպէս չի լինի, գործը ընկնելու է բոլորովին անտեղակ, անհասկացող մարդկանց ձեռքը։ Դուք իբրև հրապարակախօս պէտք է լաւ հասկանաք, թէ դրանից ինչ վտանգ կարող է սպասվել։

Ես կատարեցի իմ պարքս, կատարեցէք և դուք ձեր պարքը։ Եթէ համաձիտ էք ինձ հետ, գործենք միասին. եթէ հակամիտ էք, ներկայացրէք իմ այս զրուածքս հասարակական դատին։

Սարգիս Բահաթրեան

—

Շուշի, յուլիսի 30-ին

Եղէք բարի, «Մշակ»-ի մէջ յայտարարութիւն արէք, որ Խաչէնի համար վերին ատաֆանի կարևոր են բժիշկ և ֆելդշէր, բժշկական առողջապահական խումբը կազմելու։

Խաչէնի գրութիւնը ծանր է, դեղենիներնոյն մեծ պակասներ է տալիս։ Դա—սովի հետևանքն է։ Թուսցիկ բժշկական խումբը պատում էր գիւղերը և հնարաւոր օգնութիւնը հասցնում, բայց արդէն ամսից աւելի է, որ գիւղացիութիւնը զրկվեց այդ կարևոր օգնութիւնից, բժշկի հրաժարական տալու պատճառով։

Մամաւոր գիմումները ապարդիւն անցան։ Գուցէ մամուլի մէջ յայտարարութեանը արձագանք կրնան տալ հայ բժիշկները։ Իրօք, զարմանալի է, որ ներկայ ծանր մոմենտներում չը կան նոյնիսկ կամաւոր աւաղարկութիւններ։

Միջոցներ կան... երեք, չորս ամիս թուսցիկ խումբը ապասով կը լինի... Մենք կը տանք յարմարութիւններ գործելու, ձի և բժշկական պարագաներ...

Բոճիկը՝ մօտաւորապէս 100—120 ր. բժշկին և 50—60 ր. ֆելդշէրին։

Այդ տեղեկութիւնները հաղորդելու համար, եղէք բարի, նշանակեցէք խմբագրատուը, եթէ անյարմարութիւններ չը կան։ Իսկ այստեղ բժիշկը կարող է դիմել հետևեալ հասցէով՝ Шуша, Екатеринѣ Багатуровой, домъ доктора Багатурова.

Ե. Բահաթրեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մի քանի լրագիրներ իբրև լուր հաղորդել էին, ու կոմս Լորիս-Մելիքովը թողնում է Կովկասի Փոխարքայի պաշտօնը և որ հարց է յարուցված Կովկասը բաժանել երկու գեներալ-նահանգապետութիւնների՝ Հիւսիսային Կովկաս և Անդրկովկաս. մինչև անգամ հաւանական թեկնածուների անունները էլ էին յիշում այդ պաշտօնների համար։ Այդ առիթով «Правит. Вѣст.» հատատ ազբիւրներից հաղորդում է, որ կոմս Լորիս-Մելիքովի հրաժարականի մասին տարածված լուրերը անհիմն են. ինչ վերաբերում է Կովկասը նոր ադմինիստրատիվ բաժանման ենթարկելու հարցին, նա յարուցվել էր դեռ անցեալ տարի. բայց լուծվեց բացասական մտքով և այնուհետև այդ հարցը չէ շօշափվել։

Վրաց թեմի մի քանի քահանաներ, ինչպէս յայտնի է, մի պետիցիայով դիմել էին Փոխարքային, խնդրելով որ վերացվի մահվան պատիժը։ Այժմ ռուսաց սինոդը, հոգևորականութեան այդպիսի միջամտութիւնը պետական քաղաքականութեան գործերում ցնցակար համարելով, այդ առիթով հրամանագրել է Ալավերդվի եպիսկոպոս Պետրին, որ յիշեալ պետիցիան ստորագրող 4 աւագ քահանաներին և 17 քահանաներին նզովքի ենթարկէ և, եթէ վերջիններս չը զղջան, անյապաղ արգելէ նրանց քահանայագործելու և հոգևոր գործ ենթարկէ։

Ամրագրութիւնս ստացաւ հետևեալ նորագոյն հրատարակութիւնները. — 1) «Ադգային հարցը և սոցիալ-դեմօկրատիան», հրատ. «Կայծ» թերթի, գինը 10 կ., 2) Կարլին սոցիալ-դեմօկրատները», Վ. Բրակէի, թարգ. Մ. Տիրացեանի, հրատ. «Կայծ»-ի, գինը 10 կ., 3) «Մայրենի լեզուի քերականութեան պարերքը», Ա և Բ մասը, աշխատասիր. Ն. Տէր-Դաւնդանի, VI տպագր., էջ 123, գինը 50 կ., 4) «Մայրենի լեզու», Ն. Տէր-Դաւնդանի, Ա. պարի, այբբենարան և սկզբնական ընթերցասու մանուկների համար, էջ 33, գինը 25., 5) «Մայրենի լեզու», Ն. Տէր-Դաւնդանի, Բ. պարի, երկրորդ գիրք ընթերցանութեան համար, էջ 140, գինը 40 կ., 6) «Մայրենի լեզու», Ն. Տէր-Դաւնդանի, Դ. գիրք, էջ 231, գինը 55 կ., 7) «Իմամաթ», Ամարեան, պատմական հետազոտութիւն, Բ. տպագրութիւն, էջ 295, գինը 1 ր.։

—

Շաբաթ, յուլիսի 5-ին, երեկոյեան մօտ ժամը 7-ին Օքրօզանայի խանութի մօտ (Թիֆլիսից դէպի Կօջոր տանող ճանապարհի վրա) վեց գինված չարագործներ յարձակվել են դէպի Կօջոր գնացող երկու կանոց վրա և խլել են 50 կապէկ։ Յետոյ նոյն չարագործները յարձակվել են դէպի Կօջոր գնացող կառքի վրա (линейка)։ Կառքի մէջ նստողներից մի քանիսը ատրճանակներ են ունեցել և սկսել են կրակել ասպարիզների վրա։ Ատրճանակի ձայնից մօտ են վազել սարժենիկները։ Չարագործները կրակելով գնացել են դէպի քօսանիկական այգին։ Հրացանագրութիւնը մասնակցել է նաև մօտ վազող մի պատրուլ։ Վերջը չարագործներից մէկը սպանվել է, իսկ միւսը ծանր կերպով վիրաւորվեր։ Միւս չարագործները թաքնվել են ձորում։ Երբ գիշերվայ մօտ ժամը 10-ին գիրքի տեղն էր եկել գաւառապետի օգնականը սարժենիկների հետ միասին և սկսել էր խուզարկել ձորը, ասպարիզները, օգտվելով մթութիւնից, փախել անյայտացել էին։ Երկրորդ օրը ձորում գտել էին էլի մէկ սպանված ասպարիզ։ Սպանվածների անձնաւորութիւնը պարզված չէ, բայց նրանք տեղացիներ են։

—

Ելիզավետինսկի փոստոցում, կրեդիտային ընկերութեան տան մէջ, օգոստոսի 6-ին, յունիսի 10-ին Բէյզեր անունով մէկի վարձած ամբարը խուզարկելու ժամանակ գտել են 22 արկղ (142 պուդ 27 ֆ.) թէյ մօտ 11 հազար ռուբլու արժողութեամբ, որը գողացված է յունիս ամսին կայարանի մի վագոնից։ Նոյն ամբարում ձերբակալել են Դաւիթ Խուդային, Պետրոս Աչարաշվիլիին և Իոսիֆ Շեխտերին։

(«Кавк.»)

—

Օգոստոսի լոյս 7-ի գիշերը Խօջիանքի մօտ փորից ծանր կերպով վիրաւորել են մի անյայտ մարդու, որ Միքայէլեան հիւանդանոցը տանելուն պէս վախճանվել է։

—

Օգոստոսի 7-ին Վիննի զառիվերի վրա Աստրամգանի հագուստեղէնի խանութից անյայտ չարագործները գողացել են մօտ 700 ռուբլու հին շորեր։

—

Օգոստոսի 7-ին, ցերեկվայ ժամը 4-ի մօտերը, Նիկոլաևսկի փոստոցում ապրող անասնաբուժական բժիշկ Վեսէլինսկու ընակարանում, վինտօվկայով, ինքնասպանութեան նպատակով վիրաւորել է իրան ձախ կողքից նոյն Վէսէլինսկու որդի զրագունեան գնդի ինքնակամ զինուոր (вольноопредѣляющий) Ալէքսանդրը։ Վէսէլինսկին, որը հիւանդանոց տանելուն պէս մեռնում է։ Հանգուցեալը թողել է մի նամակ, որով խնդրում է իր մահվան համար ոչ ոքի չը մեղադրել և դրա հետ միասին շնորհակալութիւն է յայտնում հօրը բարեացակամ վերաբերմունքի համար։

—

Սոչի օգոստոսի 7-ին, գիշերվայ ժամը 12-ին, Ալտիլերիյսկի հրապարակով անցնող իշխան Նիկոլայ Իսսիֆովիչ Ամիրխաբարի վրա (19տ.) յարձակվում են երեք չարագործներ և պիտին ինչ որ բութ գործիքով վերքեր հասցնելով, խլում են նրանից 27 ր. և անյայտանում։ Վիրաւորվածը տարված է Միքայէլեան հիւանդանոց։

—

Օգոստոսի 8-ին, առաւօտեան մօտ ժամը 9-ին Միքայէլեան փողոցի վրա գտնվող Մ. Ասարոնեանցի կօշիկների արհեստանոցում երկու բանւորներ՝ Յովհաննէս Զաքարեանցի և Աղասէս Ադամեանցի միջև վէճ ծագեց, որի ժամանակ Զաքարեանցը վիրջինին դանակով 3 տեղից վիրաւորեց։ Ադամեանը հիւանդանոց հասնելուն պէս վախճանվեց։

—

Օգոստոսի 8-ին, առաւօտեան ժամը 8-ին, Արբուզովի հրապարակի դիմաց ձկնորսները գետից հանել են մի անյայտ, մօտ 35 տարեկան, կնոջ դեակ։ Դիակը ուղարկվել է Միքայէլեան հիւանդանոցի կմաղքային բաժինը։

—

Պետերբուրգի համալսարանի դասաւանդող տարին մարմինը միջնորդութիւն է յարուցել բանալ Պետերբուրգում ազատ համալսարան՝ ժողովրդական լուսաւորութեան նախկին մինիստր Զենգէրի նախագծի համաձայն։

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը վճռել է ցնդ ունեցող անձանց իրաւունք տալ բանալու կրթական հասատատութիւններ յայտարարական կարգով։ Ո՛չ քրիստոնեայ անձերի համար այդ իրաւունքը պայմանաւոր է, նրանց բացած հասատատութիւնների մէջ պատասխանատու անձը լինելու է քրիստոնէական անձերից։

(«Р. В.»)

—

Ծովային շրջանների լուրեր են պատում, որ ծովային մինիստր փոխ-ծովակալ Բիրիլովը շուտով թողնելու է իր պաշտօնը։ Նրա յաջորդ համարում են ծովակալ Բօժէսուվէնսկուն։ Վերոյիշեալ լուրերը, կարծես հաստատվում են ծովակալ Բօժէսուվէնսկու վարմունքով։ Մօտ օրերս գալով Կրոնշտադ, նա ձևական հարց ու փորձ է արել անկարգութիւնների առիթով հիւանդանոցում և մի քանի դաւերում։

—

Ինչպէս հաղորդում է «Пет. Газ.» լրագիրը, Պետական Դումայի անդամների ընտրութիւնները կը սկսվեն նոյեմբեր ամսից։ Ընտրութիւնների դրութեան մասին կը քննվի օգոստոսին և սեպտեմբերին կը հրատարակվի մի ուկազ, որ կը վերաբերի ընտրութիւնները նշանակելուն։

—

Ծովային շրջաններում խօսում են ծովային փարտիան մօտաւոր ապագայում ամենախիստ քննութեան ենթարկելու մասին։ Ամենից շատ ենթարկվում է գաւազանութիւն դարձել անցած տարի արտասահմանի ֆիրմաներում պատերազմական նաւերի կառուցման պատուէրի քննութեան։ Մագրութիւն կայ քննութեան ժամանակ չը քաշվել (ճնշել) ազ օթի գիրքից։ Այդ քննութեամբ, ինչպէս հաստատում են ծովային շրջաններում, ուզում են վերջ դնել այն խօսակցութիւններին և զրախօսութիւններին, որոնք պատում են հասարակութեան և մասնաւորի մէջ, թէ մեզ մօտ և թէ արտասահմանում։ Դրա հետ միասին մտադիր են ծովային վարչութեան կանցելիարիայի ծառայողների ամբողջ ցանկը (շտատ) արտասահման նորոգման ենթարկել։

(«Бирж. Вѣд.»)

—

«Переломъ»-ի ասելով, ներկայումս բարձր կրթական հաստատութիւններ ն 6000-ից աւելի խնդրագրեր են ներկայացված՝ աւարտման քննութիւն թոյլ տալու համար։

—

Նահանգական դատարանների բոլոր դատախազները սպացել են պատուիրագրութիւն, որի մէջ մատնանշված է որ, ինչպէս տեղեկացել է արդարադատութեան մինիստր Շչեգլովիտովը, դատախազական վարչութեան անդամներից մի քանիսը վաւերաթղթեր են տալիս վարչութեան հրամանով արձակված երկրորդային նախկին ծառայողներին այն մասին, թէ դատախազային կազմի կողմից ոչ մի արգելք չը կայ վերընդունելու նրանց ծառայութեան կամ ընդհակառակն, որով յիշատակվում է նոյնիսկ այն գործունէութիւնը, որի մէջ այդ անձանց ծառայութիւնը անթոյլատրելի է։ Դատելով, որ այդօրինակ վկայագրերի տալը դատախազային իրաւասութիւնից դուրս է, և որ յաճախ անտանելի հեռանքների պատճառ է դառնում, մինիստրը պատուիրում է ձեռք առնել բոլոր միջոցները այդպիսի երեւոյթները վերացնելու համար։

(«XX Вѣкъ»)

—

Հակառակ լրագիրների տուած տեղեկութիւններին, որ իբրև թէ պրօֆեսոր Կուզմինը կարավայէվը ուղևորվել է Կրոնշտադ, ուր զինուորական դատարանում կը պաշտպանէ Պետական Դումայի նախկին անդամ Օնիպկոյին, «Переломъ»-ը հաղորդում է, որ Կուզմին-Կարավայէվը արդարև գնացել է Պետերբուրգից, բայց ոչ թէ Կրոնշտադ, այլ իր կալուածքը, որ գտնվում է Տվերի նահանգում, ուր մնալու է մինչև օգոստոսի 19-ը։ Կրոնշտադի դատավարութեան մէջ Կուզմին-Կարավայէվը չէ լինելու։

—

Սաօկհօլմի «Aftonbladet» լրագիրը հերքում է կարծիք զարդիայի հրամանատար կապիտան Կօկի կալանաւորութեան մասին տարածված լուրերը։ Նրան սպասում են Սաօկհօլմում և ֆինլանդական շրգնաների գաղտնի ժամանակ նաւանանգստում հաւաքվում է հետաքրքրվողների անգամ բազմութիւնը նրան տեսնելու նպատակով։ («Пет. Газ.»)

—

«Пет. Газ.» լրագրի ասելով, շուտով կը վերջանայ պատերազմի ժամանակ Մանջուրիա ուղարկված թէ արքունական և թէ մասնաւոր ծանրոցների գողանալու ու ճանապարհին կատարված հսկայական զեղծումների գործը։ Ինչպէս վկայում են, Ինոկենտիէվի կայարանում կատարված զեղծումի ընդհանուր գումարը հասնում է 7 միլիոն ռուբլու։

—

Պետերբուրգի նահանգապետի և Եամբուրգի գաւառական զեմստվոյին վարչութեան նախագահի միջև ծագած կոնֆլիկտը, որ յուզել էր Եամբուրգի զեմստվոն, վերջացաւ նրանով, որ նախագահի պաշտօնից, սաստկացրած դրութեան հիման վրա, հեռացրին բարօն Տիզենհաուզենին։ Տիզենհաուզենը պատասխանատուութեան է ենթարկվում նահանգի բարձր իշխանութեան հրամանները չը կատարելու համար։

—

ԱՄԱՍԻԱՅԻՑ մեզ գրում են. «Մեր գաւառում Թուրքերը սկսել են 100 200 գլուխ ապրանք տանել և այն. դրութիւնը կասկածելի է դառնում»։

—

Օգոստոսի 2-ին Պետերբուրգից Բրեստ-Լիտովսկ են ուղարկվել մի գնացք թնդանօթներ, արտիլերիական ռազմամթերքներ և փամփուշտներ։ Գնացքի հետ գնում են 95-րդ Կրասնօյարսկի հեռակայ գնդի զինուորները և ուրիշ զօրամասերից մի քանի զինուորներ իբրաքանչիւր վաշտից։

(«Р. В.»)

—

«Мысль» լրագրի խմբագիր պատգամաւոր Սօլօմիկօին օրինական պատասխանատուութեան ենթարկելու գործը յանձնված է Օդեսայից մօտ ժամանակներս Պետերբուրգ փոխադրված դատախազի օգնական Օբրաշկեվիչին։ Քննութիւնը արդէն վերջանալու մօտ է և սոնիկայ ամսի սկզբներում գործը կը քննվի Պետերբուրգի դատաստանական պալատում։

—

ԼԵՆՔՕՐԱՆԻՑ մեզ գրում են, «Երեկ յուլիսի 26-ին, այստեղի քաղաքային ժողովարանում առաջին անգամ մասնակցութեամբ մեծ մասը օտարականների՝ Մկրտումեանցի, Մանգասարանցի, Տէր-Ստեփանեանցի, Թումանեանցի, Սիմօնեանցի, Ատուռեանցի և Բարամեանցի ներկայացրին՝ «Նաւթի փանտան», «Ազատութեան պուռղ» և «Երկու քաղցածներ»։ Բաւական ունեցանք տեսնել առաջին անգամը Լենքօրանում հայոց ներկայացումն, որը ապասածից աջող անցաւ, յօգուտ բարեգործական նպատակի»։

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են. «Յուլիսի 27-ին թուրք Բեօլանլի գիւղի «Թուսցիկ խումբը» ազգայնական հոգի վրա սպանեց Ն. այլանլուեցի մի անդէն և անմեղ հայ իր բօստանը նայելիս, թողնելով 5 մանր որբեր։ Սրանից մէկ ամիս առաջ թուրք Զէյվա գիւղում անհետացան 1 հայ և 1 հրէայ մանրավաճառ. խաղաղարար մասնաժողովի ձեռքով ապացուցվեց և արձանագրութիւն կազմվեց, որ սպանութիւնը կատարվել է այդ գիւղում։ Գաւառապետը հրապարակով խոստացաւ դիմելու գեներալ-նահանգապետին խիստ պատժելու այդ գիւղացիներին, բայց մինչ այժմ պատիժը չը տեսանք։ Խլանուված նորից գրկնեցին սպանութիւնը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

ՆԱՄԱԿ ՖՐԱՆՍԻԱՅԻՑ

—

Պարիզ, օգոստոսի 1-ին

Արդէն 7—8 ամիս է, որ ֆրանսական պարլամենտը որոշել է եկեղեցու և պետութեան բաժանումը. պակի կողմից սակայն գեռ ես ոչ մի պատասխան չը կայ։

Պապակութիւնը այս վերջին տարիներս շատ և շատ սիալ քայլեր է արել և տեսնում է, որ օր ըստ օրէ իր ֆանատիկ պաշտօնեաների թիւը աւելի արագութեամբ պակասում է։

Իսկ ֆրանսական պարլամենտի որոշումը նրան անհաստատ վիճակի մէջ ձգեց. ընդունելի այդ որոշումը, խոնարհել նրա առջև, թէ դէմը բարձրանալ և կրօնական ներքին կռիւ մէջ ձգել ֆրանսիային։ Պապը լաւ հասկանում է այդ երկու որոշումների վատ հետևանքը իր գոյութիւնը պաշտպանելու խնդրի մէջ.

Չէ՞ որ ընդունելով պարլամենտի որոշումը, նա ամբողջ աշխարհում տարածված ֆանատիկների աչքն է բանալու, ցոյց տալով ամենքին, որ ինքը պապականութիւնն էլ այժմ հասկացել է, որ նմանում է հարիւրամեայ մի անդամալոյծի, որը սպասում է անողոք ճակատագրին՝ ճակատագիր կործանման, ճակատագիր մահվան և վերջապէս ճակատագիր մոռացութեան։

Բայց որ չընդունի, արգիւօք նա հաւատացած է, որ բաւականաչափ բազմութիւն, ֆանատիկ կաթոլիկներ պիտի լինեն Ֆրանսիայում, որ դիմեն դէնքի՝ պաշտպանելու պապականութիւնը Ֆրանսիայում։ Ո՛չ, նա ինքն էլ հաւատացած չէ այդ բանին։

Եւ հէնց ահա այդ պատճառով է, որ պապը փնտռում է մի երրորդ ճանապարհ, մի միջին ճանապարհ։

Բայց արդեօք, մի միջին ճանապարհ գոյութիւն ունի՞ այս խնդրի մէջ. ես չեմ կարծում։

Ա. Օհանեանց

ԹԱՒՐԻԶԻ ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԸՆՏՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

—

Թաւրիզ, 24 յուլիսի

Անցեալ կիրակի օրը, յուլիսի 16-ին, տեղի ունեցաւ Դալա Թաղի երկսեռ դպրոցների հոգաբարձական ընտրութիւնը, համաձայն պատ. Թեմական խորհրդի կողմից նախօրօք տրված յայտարարութեան։

Առաջին անգամն էր, որ ես տեսնում էի Թաւրիզում այսպիսի մի բազմամարդ և ազատ ոգի։ Բարքանչիւր կուսակցութիւն ասպարէզ էր հանել իւր բոլոր ոյժը ընտրել տալու համար իր թեկնածուներին, բայց վերջնական յաղթութիւնը մաց ժողովրդական կուսակցութեան։ Հակառակ էին միայն դաշնակցականները, որովհետև հաստատացել էին, որ ժողովրդի թեկնածուների մեռնում է։ Հանգուցեալը թողել է մի նամակ, որով խնդրում է իր մահվան համար ոչ ոքի չը մեղադրել և դրա հետ միասին շնորհակալութիւն է յայտնում հօրը բարեացակամ վերաբերմունքի համար։

—

Սոչի օգոստոսի 7-ին, գիշերվայ ժամը 12-ին, Ալտիլերիյսկի հրապարակով անցնող իշխան Նիկոլայ Իսսիֆովիչ Ամիրխաբարի վրա (19տ.) յարձակվում են երեք չարագործներ և պիտին ինչ որ բութ գործիքով վերքեր հ

դվում է։ Որոշվեց շնորհակալութեան ուղերձներ ուղարկել Բօլգարիայի արտասահմանեան բարեկամներին, այսպէս օրինակ՝ կոմս Իգնատիէվին, Բալկանեան կոմիտէի նախկին նախագահ անգլիական մինիստր Բրայսին, ֆրանսիացի հրապարակագիր Գեբարին և ռումինակ. մինիստր Լագօվարին։ Պաշտօնական հաղորդագրութեան մէջ յայտարարվում է, որ մինիստրների խորհուրդը վճռել է պետական հաշուով մինչև ձմեռ վերակառուցել Անխիալօում, հրդեհի ճարակ դարձած բոլոր 816 տները։

ԼՕՆԴՕՆ, 6 օգոստոսի։ «Դէյլի-Տելեգրաֆի» ունեցած տեղեկութիւնների վրա հիմնվելով Եպօնական բանկի վերատեսչի օգնական Տակագաշին մեկնում է Անգլիա և Ամերիկա՝ հին փոխառութիւնների պայմանագիրների մասին բանակցութիւններ վարելու համար։

ՎԱՐՇԱՎԱ, 7 օգոստոսի։ Օր չէ անցնում, որ սպանութիւններ, կողոպտումներ և յարձակումներ չը լինեն։ Զինված յարձակումները սովոր դարձել։

8 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 օգոստոսի։ Քաղաքս ժամանեց ռուսաց Պալատի մօտ նշանակած Նորվեգիայի դեսպան Շուխան Պրեբէնսէնը։

Սամոքսային քաղցկեղ վախճանվեց Պետական Խորհրդի անդամ Տրեննէրը։

Երէկ, Պայծառակերպութեան օրը, մաղթանքից յետոյ, անգի ունեցաւ եկեղեցական բազմամարդ թափօր դէպի քաղաքի հրապարակը։ Սակայն քիչ մնաց որ տօնը դրժբաղդութեամբ վերջանար։ Թափօրից առաջ անակնկալ լվացին երեք տրաքցներ, որը ըստերևոյթին պանիկա գցելու նպատակով էին արված։ Հասարակութիւնը սկսեց փախուստի դիմել։ Շուտով կարգը վերականգնվեց։ Եկեղեցական թափօրը շարունակվեց։ Միևնոյն ժամանակ անյայտ չարագործները հրացանի փամփուշտների (капсуль) մէջ ածած պայթուցիկ նիւթով թեթև պայթում առաջացրին տաճարում։

ՈՒՄԱՆ, 7 օգոստոսի։ Պետական Դումայի նախկին անդամ Ֆրէնկէլը ձերբակալվել է։ Նա մեղադրվում է նրանում, որ Ուման հասնելուն պէս գիւղացիներին անլէգալ գրուածքներ է բաժանել։

Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորովնան Կրասնօսէլսկի հիւանդանոցին նուիրել է 2382 օրինակ Աւետարան և ուրիշ եկեղեցական գրքեր, և 250 կողով շամպայն՝ հիւանդանոցի թոյլ և ուժասպառ հիւանդների համար։

Պետերբուրգ եկաւ Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորովնայի քոյրը՝ պրինցուհի Վիկտորիա Վատենբէրգսկայան։

«Полярная Звѣзда»-ի խմբագիր Մարուվէն, որ մեղադրվում էր 128-րդ յօդուածով, արդարացվել է։ Լրագրի հրատարակութեան արգելքը վերացվում է։

Բերլին, 7 օգոստոսի։ «Նորդ-Դեյդչէ» լրագրի առելով, Բիւլովը դեռ Նորդենէյից բացատրութիւն է պահանջել երկրագործութեան մինիստրից, թէ ճիշտ են արդեօք այն լուրերը, որ իբր մինիստրը մասնակցել է գաղթականական վարչութեան կարիքներն բաւարարութիւն տուող ընկերութեան։ Պոդբէլսկին ներկայացրել է մանրամասն բացատրութիւն, և վերջում խնդրել է հաղորդել Կայսրին, որ ինքը ցանկանում է հրաժարական տալ։ Կայսրը, տանալով Բիւլովի զեկուցագիրը, յայտնել է, որ նա այժմ անկարող է մի որոշակի վճիռ տալ Պոդբէլսկու հրաժարացման հարցի նկատմամբ։

ՆՈՎՈՐՈՍԻՅՍԿ, 7 օգոստոսի։ Առաւօտեան, պետական գինու պահեստի մօտ 8 գինված անձինք յարձակվեցին զրամատարի վրա և խլեցին նրանից 2000 բուբլի։ Օգնութեան հասած ոստիկանը ծանր վիրաւորված է դաշոյնով։

ԵԱՐՕՍԼԱՎ, 7 օգոստոսի։ «Միշկինսկի գաւառի բոլոր մասերում շարունակ միմինդներ են տեղի ունենում, որոնց ժամանակ ագիտատորները գիւղացիներին թռուցիկներ և բրօշիւրներ են բաժանում։

ԻՐԻԻՎ-ՊՕԼՍԿԻ, 7 օգոստոսի։ Ամենուրեք գիւղացիները այրում են կալուածատէրերի խոտը և շինութիւնները։ Հրդեհում են գլխաւորապէս ինքն իրան բռնկվող փօսֆորով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 օգոստոսի։ Ակմօլինսկի շրջանի գինուորական նահանգապետ գնդապետ Բօմանովին Բարձրագոյս հրամայված է լինել Սիբիրաեան շրջանի զինուորական-նահանգապետ։

Օֆիցէրների մօտ ծառայող զինուոր սպասաւորներին (деньщик) ծառայութիւնից ազատելու հարցը արդէն մշակվել է և կը յանձնվի զինուորական խորհրդին ի քննութիւն։

ՄՕՍԿՎԱ, 7 օգոստոսի։ Հոկտեմբերի 17-ի դաշնակցութեան մէջ—գաւառական բժիշկների ճնշման տակ—միաք է յայտել մինչև խաղաղ վերածնութեան կուսակցութեան հետ և քաղաքական կուռ մղել ինքնուրոյն կերպով։

Ոստիկանութիւնը յեղափոխականների մէջ 60 խուզարկութիւն է կատարել, ձերբակալել է կուսակցութեան կոմիտէների անդամներից շատերին և գրաւել է բազմաթիւ արձանագրութիւններ։

ՎԱՐՇԱՎԱ, 7 օգոստոսի։ Երէկ, ընդհանուր առմամբ, հանգիստ անցաւ։ Բայց և այնպէս, պահակախմբի խուզարկութեան ժամանակ սպանված է 1 քաղաքացի, վիրաւորված են 5 հոգի։ Շատերը ջարդուածքներ ստացան զինուորների հրացանի կոթերի հարուածներից։

ՆԻԻ-ԵՕՐԿ, 7 օգոստոսի։ Վայլպարիւլից տացված տեղեկութիւնների համաձայն—հերդեհը ըստ երևոյթին վերջացել է, որովհետև քաղաքին մասերից շատերը այրվել են։ Սպանվածների թիւը հաւանօրէն 1000-ից անց է։

ԲԵՐԴԻԱՆՍԿ, 7 օգոստոսի։ Գիշերս տեղս բերվեցին և բանտարկվեցին Պետական Դումայի նախկին անդամ Պրիդուլը և Ալլօվկա գիւղում Վիբօրգի կոչի նման դիմում կազմելու համար ձերբակալված ուսուցիչները։ Գիւղացիները, իբրև բողոք, հրաժարվեցին սայլեր տալ։

ԿՐՕՆՇՏԱԴ, 7 օգոստոսի։ Այսօր, տաւօտեան ժամը 5-ին № 4 նաւանգաստում ի կատար ածվեցին զինված ապատամբութեան մեղսակիցները 7 զինուորների և 4 քաղաքացիների մահվան պատիժը՝ հրացանագրկի միջոցով։ Զինուորները ընդունեցին քահանային, իսկ քաղաքացիք հրաժարվեցին։ Վաղը կը դեղ նոսաբ Մղեբրովի։ (ռ.հ.շ.) 37—100

քննվի օֆիցէրներին սպանող և ապատամբութեան մասնակցող նաւաստիների գործը։ Ասում են, որ մեղադրեալներին մի քանի խմբերի են բաժանել։ Առաջին խմբումն են քաղաքացիները, ի թիւս որոնց և Պետական Դումայի նախկին անդամ Օնիպկօն։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 օգոստ.։ Այս տարի պօլիտեխնիկումի ինստիտուտը կանանցից կընդունվեն միայն տնտեսական բաժնում, այն էլ իբրև ազատ ունկընդիրներ։ Կանայք նաև համալսարան կընդունվեն շատ սահմանափակ թիւով, որովհետև այս տարի ուսանողների թիւը չափազանց մեծ է։

Դիներալ-մայոր Սօկօլովսկուն հրամայված է լինել Աստրախանի կազակների ատաման։ Աստրախանի նահանգապետ գ.-մ. Դրօմչէվսկին հիւանդութեան պատճառով արձակվում է պաշտօնից։

ՐԵՎԷԼ, 7 օգոստոսի։ Այսօր, ամենուրեք, ուր հրէայ ազգաբնակութիւն կայ, պահվում է 72 ռաբբիների որոշած ընդհանուր ծոմը՝ սպանող ջարդերից ազատվելու համար։ Կատարվում են նաև մաղթանքներ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուվիկա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և մէզասեռ. հ.
Կ. Մ. ԶԻՆՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի. ներքին և նեարդային։
Մ. Դ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մարթու, վեներակ և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՄԵՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Ի. Կ. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ.ՏԱՐԱԳԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԳԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՂԵՐԲՈՒՆԻ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.

ՆԻԿՈՆՆԵՐԸ

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկաբաս։
Ռ. Դ ԱԲԵԱՆՑ—7—7½ ժ. ներքին և երեխայոց հ.
Վճարը 50 կ. դեղատոմսերը ձրի։ Հաստատեցեք (դոմ սիլիսմի) և օգնեցեք յիշի համար տատնձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
մշտական մասնակցութեամբ։
Ելիզավետինսկայա փողոց, 101, տելեֆոն 1026
Հիւանդների ընդունելութիւն ամեն օր։
Մ. Գ. ԱՂԱՋԱՆԵԱՆՑ 1—2 ժ.—մէզասեռական, կաշուի և սիֆիլիս։
Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ 11—12 ժ.—ջղային, ներքին և երեսաբո-բուժութիւն։
Գ. Ն. ԴԷՄԻԴՕՎ—11—12 կ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ 12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Գ. Հ. ԹԱԴԷՈՍԵԱՆ 12—1 ժ. ներքին և երեխայոց հ
Մ. Գ. ԿԻՄՕՆՑ. 1—2 ժ. վիրաբուժական հ.
Մ. Մ. ԷԼԶԻԵԱՆ 1—2 ժ. քթի, կոկորդի և ականջի։
Գ. Ա. ԲԷՑԷՐ—երեխայոց և ներքին հ.
Հիւանդանոցում բժշկում են հիպնօզով, կատարվում միկրոսկոպական, բակտէրիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և նանուտների (кормилица) ընտրողութիւն։ Բժշկական խորհրդի համար վճարը 50 կոպ.։ Օպէրացիայի և համախորհրդի վճարը ըստ համաձայնութեան։ ԴիրքերՕթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին նոմէրներից։
(շ. ուս.) 83—100

Գիմնազիայի դասընթացքն աւարտած և տնային ուսուցչութիւն ցեղ ունեցող
Մի օրիորդ,
որը մի տարի պարապել է հայոց դպրոցում, ցանկանում է ուսուցչութիւն պաշտօն ունենալ նահանգական և կամ գաւառական քաղաքների հայոց դպրոցներում։
Հասցէն. Петровскъ, Дагест. обл., священнику Аршену Маркарьянцъ.
(շ. ե. հ.) 3—5

ՎԱՐՁՈՒ Է ՏՐՎՈՒՄ
Գայիանեան օրիորդաց դպրոցի ներքևի յարկը (Սօլօլակ, Պասկևիչի փողոց, տուն Տէր-Ասատուրովի № 13) 3—3 կամ միասին 6 ՍԵՆԵԱԿՆԵՐ և այլ յարմարութիւններով։ Դիմել դունապան Ցարութիւնին։

ՆԿԱՐԻՉ Ա. ՖԷԹՎԱՃԵԱՆԻ
ակվարելներից ֆաքսիմիլէ պատրաստված
ԱՆԻԻ ՏԵՍԱՐԱՆՆԵՐԻՑ
Գունաթիպ ալբօմները
ստացվել են արտասահմանից և ծախվում են Թիֆլիսում՝ Գուտտենբերգի գրավաճառանոցում, Գէնտու և Մարիմի վիմագրական արհեստանոցում, Բաթումում՝ Արմենակ Ֆեթվաճեանի մօտ, Օզեսայում՝ Զարեհ Սարգսեանի մօտ։
Ալբօմի հատը 1 բուբ. 20 կոպ.։
Անիի պատկերները ծախվում են և իբրև պօստ-կարտեր, բաց նամակներ, զոյգը 15 կոպ., ժանրային պատկերներ՝ հատը 10 կ., հազարով գնողները կը ստանան 20% վեղջ։ Պօստի, ծրարման և փոխադրութեան հարկաւորված ծախսերը գնողների հաշուով են։
Արտասահմանում ապրողներին ձեռնտու է դիմել Վիեննա՝ Vienne, Boghos Kürkdjian-ին։

Ս. Գ. Շերմազանեան
Ընդունում է հիւանդներին ամեն օր 9 ժ.—2 ժ. և երեկոյեան 4—7 ժամը։ Երևանեան հրապարակ, տ. Գուրզէնովի № 7. պօսեան ծախս վճարելու. ԳԻՆՆ է 3 ր. 50 կոպէկ։ (հ. կ. ե.) 11—20

Թիֆլիսի կայարանում կորել է Վ. Խօրէշիի թարգմանած
«ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԻՒՆՆ ԵՒ ՍՕՑԻԱԼԻԶՄԸ»
բրօշիւրից 360 օրինակ՝ այլ իրերի հետ։ Այս թարգմանութիւնից միայն էջմիածնում և Բաքւում է տարածել թարգմանիչը. ուրիշ տեղեր տարածվածը՝ գողացվածն է։
(չ. ու.) 1—2

Թարգմանվում է
Ա. Բ—ՅՒ
«Что такое народовластіе и для чего это нужно народу?»
Վ. ԽՈՐԷՆԻ
(չ. հ.) 1—2

Ալէքսանդրօպոլի ս. Փրկիչ եկեղեցու տպագրոց երկրագաւառ դպրոցի համար ՀԱՐԿԱՒՈՐ է ռուսաց լեզուի ՈՒՍՈՒՑԻՉ շաբաթական 24 դասով. դասագինը 30 բուբլի։
Կրթական ցէնզը ամենապակասը լինելու է միջնակարգ։ Ցանկացողները դիմելու են մինչև օգոստոսի 20-ը հոգաբարձութեան։
(չ. ու.) 1—2

Մի տիկին, որ 5 տարի շարունակ հաշտութեամբ է պարապել, որոնում է յարմար պաշտօն։ Հասցէն՝ «Մշակի» խմբագրատուն։ 1—3

ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Լոյս տեսաւ՝
1. Հայրենասիրութիւն, կ. Կաուցկու . 3 կ.
2. Պետական Դումա . . . . . 3 »
3. Կորչին սօցիալ դէմօկրատները, Վ. Բրակէի . . . . . 10 »
4. Ազգային հարցը և սօցիալ-դէմօկրատիան, Ս. Շահումեանի . . . . . 10 »
Հասցէն՝ «Կայծի» խմբագրատուն։ 1—3

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Ցարսկիյ-Կալօդցայի հայ հասարակութեան համար հարկաւոր է մի
ԳԱՀԱՆԱՑ (նորընծայ)
Ուսումն աւարտած լինի ճեմարանում կամ Ներսիսեան դպրոցում, որ կարողանայ բացի ժամակարգութիւնից դասեր ունենալ փոքր աշակերտների հետ հայերէն և ռուսերէն։ Պայմաններն իմանալու համար թող դիմեն Թիֆլիս, Միջին-Փողոցում, եղբ. Եարդուլանցներին։
ու. ե. 6—7

Շուլավերի երկսեռ ուսումնարանների համար հարկաւոր է աւագ ուսուցիչ, շաբաթական ռուսաց լեզուի 12—18 դաս. վեց հարիւր բուբլի ռոճիկով, չորս վարժուհի երեք ուսուցիչ շաբաթական 18—24 դասաթուաբանութեան ռուսաց և հայոց ընդունելի, երգեցողութեան, ձեռագործի, կար ու ձևի, չորս հարիւր բուբլի ռոճիկով։ Ցանկացողները պէտք է դիմեն Шулаверы, попечительству армянскихъ школъ.
(չ. ու. կ. ե.) 3—4

Պահանջեցէք ամեն տեղ «ՕԴՕԲՐԻՆ»
Միայն Միխայիլ Աբեղեանի
„Этикетъ утвержденъ правъ." մակագրութիւնով
Այս մէջքը մի քանի օրում է դարձնում ոչնչանում է։
Գեղեցիկ տարբերվում է մանրէներից։
Գլխաւոր պահեստատեղին դեղագործական ապրանքների վաճառման Կովկասեան ընկերութեան մէջ—Թիֆլիս, Բաքու, Բաթում։
10, 20, 30 11—40

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
Թիֆլիսի գրավաճառների մօտ
ԼԵՒՈՆ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆԻ
փոխադրած՝
Մանկական պատկերազարդ ու էժան հետաքրքիր գրքոյկները
ՓՈՔՐԻԿ ՅՈԼԱԿՆ
ՈՒ
ԽԼԸՇԻԿ ՆԱՊԱՍՏԱԿԸ
Գինը 55 կոպէկ
—
ՆԱՊԱՍՏԱԿ ԽԷՉԱՆԻ
ՎՐԷԺԽՆԴՐՈՒԹԻՒՆԸ
կամ
ԻՆՔԴ ՔԵԶ ՕԳՆԻՐ
Գինը 40 կոպէկ
—
ԱՌԱՋԻՆ ՎԱՍՏԱԿ
Գինը 40 կոպէկ
—
Եւ թարգմանած՝
ՈԳԵՀԱՐՑՈՒԹԻՒՆ
3 արարուածով պիէսը
Գինը 50 կոպէկ։
Ցանկացողները կարող են դիմել նաև.
Тифлисъ, Орбеліановск. ул. № 24 Левону Меликъ-Адамянъ.
(չ. 1) (հ) 8—20

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱԶՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինսկայա փողոց № 8։ (ե.ռ.)94—100

ԲԺԻՇԿ
Լեւոն Օհանջանեան
Մանանգէտ մէզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօլօվինսկի պրոսպէկտի և Կաղեռսկայա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կաղեռսկի փողոցից № 2.
(ա. օ.) 206—300

„ՆՕՄԵՐՈՍ ՑԵՆՏՐԱԼ“
մականունով։ Գները 70 կոպէկից մինչև 2 բուբլի։ Ամսական ցանկացողների հետ առանձին պայմաններով։
Գանձակում տեղի ունեցած ընդհարումների պատճառով ես տեղափոխեցի իմ կենտրօնական ՀԻՒԱՆՈՑ շքեղ կահկարասիներով Թիֆլիս Պուշկինսկի փողոցի վրա № 23, պրավօսլաւնի հոգևոր սեմինարիայի դիմաց
Ալէքսանդր Ցարութիւնով
(հ. կ. ե.) 44—100

Կարսի հայոց եկեղեցու ծխական երկսեռ դպրոցի համար հարկաւոր է համալսարանաւարտ փորձված աւագ ՈՒՍՈՒՑԻՉ։ Ցանկացողները կարող են յայտնել իրանց պայմանները։
Հոգաբարձութիւն
(ե. հ. շ.) 1—4

Ատրպատականի հայոց թեմական դպրոցը բանալու համար ընտրված ժամանակաւոր յանձնաժողովը յայտնում է ի գիտութիւն Ատրպատականի վիճակի հայ հասարակութեան, որ առաջիկայ սեպտեմբերի մէկից բացվելու են դպրոցի երկու նախակրթարանները։ Խնդիրներ ընդունվում են օգոստոսի մէկից մինչև սեպտեմբերի 1-ը. ընդունելութեան քննութիւնները կը սկսվեն օգոստոսի 25-ից։ Խնդիրները ուղղել յանձնաժողովին թեմական դպրոցի հասցէով։ 3—3

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
ԱԶԼԱՐՀԱԲԱՐԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
դասագիրք ստորին դասարանների համար
յօրինեց Մ. ԱԲԵՂԵԱՆ, ուսուցիչ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ Դ. ՄԵՄԵՐԵՆԻ
ԳԻՆՆ է 75 կոպէկ
Հեղինակից գումարով առնուազն 20 օրինակ) գնողների համար 60 կոպէկ։ Հեղինակի հասցէն՝ Эчміадзинъ, Академія, Мануку Абегянъ։ Կարելի է դիմել նաև Թիֆլիսի գրավաճառներին և Արտաշէս Աբեղեանին, «Ալիքի» խմբագրութիւն։
(ու. կ. հ. կ. շ.) 4-5

Ֆինանսների նախարարութեան իրաւասութեան տակ գտնվող
ՀԱՂՈՒՍՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՆԻԿՈՂԱՅՈՍ ՍԲՐԱՀԱՄԵԱՆԻ
Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշուապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների նախարարութեան ուսումնարանական բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում։
ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ
Երկու սեռի անձանց՝ գործնական ձևով հաշուապահութիւն 4 ամսում։
Ներկայ տարվայ կուրսերում բացի սովորական մասնագիտական առարկաներից աւանդվելու է ձրիաբար քաղաքական տնտեսութիւն (политическая экономія) և որոշ վճարով կամաւոր սղագրութիւն (стенографія)։
Ընդունելութիւնն ամեն օր ժամը 5-ից մինչև 7-ը երեկոյեան և 9-ից մինչև 11-ը առաւօտեան։ Պարապմունքները սկսվելու են սեպտեմբերի 15-ից, պարբերական ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ։ Ծրագիրն ուղարկվում է ձրի։
Դասընթացը աւարտողներին տրվում են ֆինանսների նախարարութեան թոյլատրված ծրագրի համաձայն, ատեստատներ։
Դրանից անկախ, բացված է փիչ պատրաստութիւն ունեցող անձերին ամառ առանձին բացատրիչ և կրկնողութեան կուրսեր ռուսաց լեզուի և թուաբանութեան համար։
Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադիր Թիֆլիսում Հ. Վ. Աբրահամեանի, Николаевская ул. № 22, ամենայն օր։
Վերևում յիշած ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։ Օտարաքաղաքացիները կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու. ԳԻՆՆ է 3 ր. 50 կոպէկ։ (հ. կ. ե.) 11—20

ԵՐԿԱԹՈՒՂԻ
(Ամառային գնացքների երթևեկութիւնը)
(Ժամերը հաշուած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի մէջինը Թիֆլիսի ժամանակով)։

	Գօստայնի	Մարդատար.	Արագ.	Ապրանք.
Բաղուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցերը.	11 ժ. 03 ր. ցերը.	12 ժ. 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր. գիշ.
Թիֆլիս հասնելը	11 » 26 » »	5 ժ. 25 ր. առ.	1 ժ. 30 ր. գիշ.	9 ժ. 37 ր. երեկ.
Թիֆլիսից դուրս գալը	12 » 26 » »	6 ժ. 01 ր. առ.	—	—
Թիֆլիսի ժամանակով)	1 » 24 » »	6 ժ. 59 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 38 ր. գիշ.	7 ժ. 07 ր. երբ.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 22 » »	5 ժ. 24 ր. ցերը.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. երբ.	6 ժ. 39 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 37 ր. առ.	5 ժ. 35 ր. ցերը.	10 ժ. 40 ր. գիշ.
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 35 ր. առ.	6 ժ. 33 ր. ցերը.	11 ժ. 38 ր. գիշ.
Բաքու հասնելը	1 » 20 ր. ցերը.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր. ցերը.
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր. գիշ.
Կարսից » »	3 » 57 » »	—	—	3 ժ. 16 ր. գիշ.
Ալէքսանդրօպոլից դուրս գալը	7 » 38 » երբ.	—	—	7 ժ. 06 ր. առ.
Թիֆլիս հասնելը	5 » 06 » առ.	—	—	4 ժ. 49 ր. ցերը
Թիֆլիսից դուրս գալը	11 » 12 » գիշ.	—	—	3 ժ. 25 ր. ցերը.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 10 » »	—	—	4 ժ. 23 ր. ցերը.
Ալէքսանդրօպոլից դուրս գալը	10 » 30 » առ.	—	—	2 ժ. 47 ր. գիշ.
Երևան հասնելը	1 » 55 » ցերը.	—	—	6 ժ. 10 ր. գիշ.
Կարս հասնելը	4 » 23 » »	—	—	8 ժ. 48 ր. առ.

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ
(Тифлисъ, Сололакъ, Лермонтовская ул. № 15)
Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։
Աւանդվող առարկաները սրանք են՝ 1) Առևտրական տնտեսութիւն. 2) Առևտրական թուաբանութիւն. 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային). 4) Թուաբանութիւն համրիչի վրա. 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Առևտրական և մուրհակի կանոնագրութիւն և 7) Գեղագրութիւն, վառ ձեռքի ուղղելը։
Զրի ուսուցումն ցանկացողներին գրող մեքենայի վրա։ Պարապմունքները կուրսերում լինում են ամեն օր։
Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից։ Ամենայն օր, առաւօտեան ժամը 10-ից մինչև 12-ը, և երեկոյեան 4-ից մինչև 6 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Ալէքսանդր Փրիզօնովի տանը № 9, Սերգիեվսկայա և Լերմօնտովսկայա փողոցների անկիւնում։ Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիաբէս կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Հ. Պ. Մանուէլեանցը։ (կ. շ.) 10—25

„ՎԵՐՍԱԼ“
[ՀԻՒՐԱՆՈՑ]
Քաղաքի ամենակենցաղական մասում
Վօրոնցօվի արձանի մօտ,
ուր շաղկապվում են տրամվայի բոլոր գծերը։ Համարները սկսած 1 բուբլուց և աւելի։ Ցարմար կերպով կահաւորված համարներ՝ բոլոր յարմարութիւններով։ Բաղանիք, դուշ, տելեֆօն, էլէքտրական լուսաւորութիւն ընդհանուր շինութեան մէջ։ Օդի և լոյսի առատութիւն։ Կատարեալ մաքրութիւն և կարգապահութիւն։ Խնդրում ենք չը լսել գործակալներին, իբր թէ ազատ համար չը կայ և այլն։
(կ. ե. հ.) 8—24

Առեւտրի եւ արդիւնաբերութեան տնտեսութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐ
(Թիֆլիս, Միքայէլեան պրոսպ. տուն № 24/4.)
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։ Դասընթացքը աւարտողներին տրվում են ատեստատներ։ Առարկաներն են. 1) առևտրական տնտեսութիւն (քաղաքական տնտեսութիւն). 2) հաշուապահութիւն (պարզ, իտալական, բանկային և գործարանային). 3) առևտրական թուաբանութիւն. 4) կանոնագրութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնագրութիւն.) 5) առևտրական թղթակցութիւն 6) թուաբանութիւն համրիչի վրա. 7) վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենավառ ձեռքի ուղղել)։ Առարկաները ուսուցանվում են Վիեննայի առևտրական ակադեմիայի ծրագրով։ Ամբողջ տարվայ վճարն է 60 ր.։ Կուրսերին կից բացվում են
ԿՈՒՐՍԵՐ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ
(Գերմաներեն, Ֆրանսերեն եւ Անգլիերեն)
Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից։ Խնդիրների ընդունելութիւնը օգոստոսի 1-ից ամենայն օր երեկոյան 4—7 ժամը։ Ծրագիրը և կանոնները ուղարկվում են և տրվում են ձրիաբէս կուրսերի հիմնողի բնակարանում
9—10 Առևտրական գիտութիւնների կանդիդատ Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆ

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
Գեղունին իր ծանօթ ծրագրով, իր յատուկ գեղարուեստական և գրական բովանդակութեամբ հրատարակուած։ Կովկասահայ մեծ զանգուածը փութկոտութեամբ ուշադրեալ արկածեալ թերգահայը. հիմա ինքն է լցողը, ինքն է վիրաւորուածը, և ինքն է սովի և կրակի մատնուածը. այդ մեր հայութեան ամենէն ազնիւ զաւակներուն հիմա ձեռք կուտայ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ, ձեռնպահ չի մնայ և Գեղունին, որ Կովկասահայուն սրտին մէջ համակրանքի բաժին մը ունի։ Ս. Ղազար 1000 օրինակ այս նոր Գեղունիին (1906) յղեց Թիֆլիսի ի նպաստ Կովկասահայ արկածեալներու յանձնաժողովին. ընդհանուր հայութեան այն ամէն անհատ որ տառապեալներու գանձանակին մէջ համեստ լումայ մը—10 ֆր. նետելու կարողութիւն ունի, ցանկալի է, որ դիմէ այդ յանձնաժողովին, ուսկից փոխարէն իր բարեգործութեան, կը ստանայ նոր հրատարակուած Գեղունին, որուն կատարելագործումը համար թերթին մի և նոյն վարչութիւնը ամէն ճիգ ու ջանք թափած է և աւելի եռանդով։
Գեղունին բաժնեգինն է 10 ֆրանկ։
Դիմել Թիֆլիսի Նպաստամատոյց Յանձնաժողովին։ 9—2

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆ